Արտատպված է՝ Բոլեսլավ Պրուս, Անիծված երջանկություն (վիպակ, պատմվածքներ), Ե., «Սովետական գրող», 1987: Լեհերենից թարգմանեց Ֆարիդ Գրիգորյանը:

ԱՆԻԾՎԱԾ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

I

ՄԻ ՔԻՉ ԼՈՒՅՍ

Պան Վլադիսլավ և պանի Էլենա Վիլսկիներն ամուսնացել էին ընդամենը կես տարի առաջ: Նրանք վատ չէին ապրում, թեպետ կարող էին ավելի լավ ապրել: Երեք սենյակ ունեին նրանք, դրան ավելացրած փոքրիշատե կահ-կարասի, ընկերոջ կողմից նվիրած մի երկու օլեոգրաֆիա և պառավ աղախին՝ Մաթեուշովան, որն աստված գիտե, թե որտեղից էր հայտնվել, սակայն վատ խոհարարուհի չէր:

Տնտեսության մեջ պանի Էլենայի ներդրումը շատ մեծ չէր: Նախ և առաջ պետք է հիշել դեղձանիկը, որը վանդակի հետ միասին նրան էր նվիրել մորաքույրը: Մորաքույրը հարուստ չէր, դե նվերն էլ, չասենք թե թանկագին է, սակայն նրա ուտելու և երգելու կարողության համար նրանով ուրախանում էին, ուստի, ինչպես ընդունված է, վանդակը կախեցին պատուհանից:

Դեղձանիկից բացի սենյակում տեղավորեցին սպիտակեղենով լեցուն արկղը, մի արկղ էլ՝ հագուստներով լի, գլխարկով կարտոնատուփը և փոքրիկ մի զարդասեղան՝ սատանան գիտե թե ինչով լեցուն: Այդ ողջ հնոտիքը բերող կառապանը հիսուն կոպեկ թեյանվեր ստացավ և շատ գոհ մնաց, իսկ Էլունյան, ինչպես հարկն է տեղադրեց արկղերը, կարտոնատուփը, զարդասեղանն ու... նույնպես գոհ մնաց: Գուցե և ավելի շատ, քան կառապանը:

Տեղավորվելով նոր տանը, նա շուտով նկատեց, որ իրեն ինչ-որ բան պակասում է, և մի գոգնոց կարեց իր համար՝ գրպաններով ու կրծկալով, իսկ փեշամասն էլ զարդարեց բոլորածալով: Ջահել տանտիրուհին շուտով զարդարվեց ոսկու նման գեղեցիկ ու մաքուր գոգնոցով և առավոտից մինչև երեկո հագից չէր հանում:Այդպես էլ ձեռքերը գրպանները դրած պտտվում էր տան մեջ, իսկ հաջորդ օրը պահեց պահարանում, ուր և այն գտնվում է առ այսօր: Ճիշտն ասած, այդ գոգնոցը նրան բոլորովին էլ հարկավոր չէր:

Մի շաբաթ անց նոր մտահոգություն առաջացավ, որը վերջացավ նրանով, որ պանի Էլենան մուսլինից վարագույրներով պինդ փակեց պատուհանը: Ամուսինը նրան գովեց, սակայն չգիտեր, թե կինն ինչու այդպես արեց: Իսկ ես գիտեմ: Այդ ամուսինը մի հիմար, բայց ներելի սովորություն ուներ՝ հաճախակի համբուրում էր կնոջը: Նա համբուրում էր նրան առաջին սենյակում, երկրորդում, երրորդում, աթոռի վրա, պատուհանի մոտ դրված հայելու մոտ, և ամեն անգամ՝ անփոփոխ հերթականությամբ: Սկզբում ձախ ձեռքը, հետո աջը (կամ հակառակը), հետո վիզը՝ բոլոր կողմերից, հետո դեմքը՝ որտեղ պատահեր…

Պետք է ապացուցված համարել, որ այդ համբույրները պանի Էլենային չէին ձանձրացնում ու չէին դառնացնում, բայց ամեն անգամ այդ արարողությունների ժամանակ կինը գլուխը պատուհանից ետ էր դարձնում: Ամուսնուն դա զվարճացնում էր, չնայած չէր հասկանում, թե նա ինչու է գլուխը թեքում: Բայց կինը հո գիտե՞ր, որ դա սարսափից է: Հենց իրենց լուսամուտի դիմաց կար մի ուրիշ տան պատուհան, իսկ պատուհանից դուրս էր նայում նոսրացած ու ճերմակած այտամորուքներով,

դեղնավուն դեմքով մի ծերունի: Ջահելները երբ էլ սկսեին համբուրվել, ծերուկը վառ կարմիր ծոպով սպիտակ գիշերային թասակը գագաթին կանգնում էր պատուհանի դիմաց, աչքերը կկոցելով և իր նման դեղին ատամները բացելով, թուլանում էր ծիծաղից:

Վրդովված Էլունյան մի օր տասը արշին մուսլին գնեց և վարագուրեց բոլոր պատուհանները: Այդ օրվանից ծերունու ծամածռված դեմքի փոխարեն նա տեսնում էր միայն նրա ալ ծոպավոր թասակը, որն ասես ցրտից դողում էր: Հավանաբար ծերուկը շատ էր բարկացած: Այդպես էլ պետք է նրան, ցանցառի մեկը, թող չծիծաղի:

Հա՜, քիչ մնաց մոռանայինք, որ բացի արկղերից, կարտոնատուփից զարդասեղանից ու դեղձանիկից Էլենան այս նոր տունը ինչ-որ բան էլ էր բերել: Ի՞նչ... Գլուխ մի կոտրեք, բարի մարդիկ, միևնույն է, չեք գտնի: Ուրեմն այսպես. նա իր հետ բերել էր մի զույգ ձեռք՝ փոքրիկ, սպիտակ, թմբլիկ ու մրջյունի պես աշխատասեր: Դրան ավելացրած՝ հաստ ու թավիշի նման փափուկ մազերի հյուսքը, մի զույգ աչքեր, ինչպես պայծառ երկինքը, մի փոքր վերև ցցված քթիկը և մարջանե շուրթերը, սպիտակ, մանր ատամները և սիրտը՝ այնպես ազնիվ ու մաքուր, այնպես սիրող ու հավատարիմ, ախ, բարի մարդիկ, դժվար թե գտնվի իմ ու ձեր մեջ:

Մի հիանալի օր (այն ժամանակ նա տասնյոթ տարեկան էր) Էլենկայի այժմյան ամուսինը, իսկ այն ժամանակ պոլիտեխնիկական ուսումնարանի ուսանող, նրան ասաց.

— Ես ձեզ ուզում եմ մի բան ասել:

— Ասացեք, լսում եմ,— թույլ տվեց Էլենան:

— Բայց դե վախենում եմ:

— Երևի ինչ-որ վատ բան եք ասելու, այո՞:

— Ես ձեզ սիրում եմ:

Էլենկան զարմանքից բացեց բերանը, հետո ասաց.

— Իսկ գիտե՞ք, ախր դա... շատ լավ է:

— Իսկ դուք ինձ սիրո՞ւմ եք:

— Չգիտեմ...

— Իսկ ինձ կսպասե՞ք:

— Օ՜, անպայման:

— Դուք ինձ խոսք տվեցիք, և երբ ես ավարտեմ ուսումնարանը, մենք կամուսնանաք:

— Խնդրում եմ պահպանեք պատշաճությունը,— նրա խոսքը կտրեց Էլենկան:

Ահա նրանց ողջ բացատրությունը: Իսկ երեք տարի անց նրանք ամուսնացան:

Վլադիսլավը ինժեներ-մեխանիկ էր, կնոջը դա բոլորովին չէր մտահոգում: Համարվում էր շատ ընդունակ ու քաղաքավարի մարդ: Այս հանգամանքը կնոջը մի փոքր հետաքրքրում էր: Այս ամենի հետ Վլադիսլավը հիանալի արտաքին ուներ՝ սև մորուք ու երկար մազեր, կանաչավուն աչքեր և

դեմքի հիանալի գույն: Այս վերջինը Էլենային բոլորից շատ էր հետաքրքրում: Ի վերջո Վլադիսլավը սիրում էր նրան, իսկ նա ամուսնու համար պարզապես խելագարվում էր:

Առողջությունը, գեղեցկությունը և միմյանց նկատմամբ սերը ընդհանրանալով, մեծ երջանկություն էր դառնում, որը տիրում էր երկրորդ հարկի երեք սենյակներում ամուսնության հինգ ամիսների ընթացքում: Սակայն ահա մի քանի շաբաթ էր, ինչ ամուսնական երկնակամարում սև ամպեր էին երևացել. Վլադիսլավը աշխատանք չուներ:

Բանկիր Վելտը, որի միջնորդության շնորհիվ Վիլսկին այս մի տարվա ընթացքում մեկ ու կես հազար դրամ վաստակեց, հարսանիքից հետո չգիտես ինչու սառեց երիտասարդ ինժեների նկատմամբ, իսկ վերջում բոլորովին երես թեքեց նրանից: Մնացել էին խնայողությունները, հույսը ապագայի նկատմամբ և պատահական որևէ աշխատանք: Սակայն այս ամենը բավական չէր ընտանիք պահելու համար: Ուստի ծախսերը ստիպված պակասեցրին, հետո մանր թղթադրամի վերածեցին վերջին քսանհինգ ռուբլիանոցը և... ծախսեցին նախավերջին ռուբլին:

Այդ օրը ջահել ամուսինների համար շատ ծանր էր: Աշխատելով չնայել կնոջ աչքերին, Վլադիսլավը փակվեց իր սենյակում, որպեսզի անարգել կերպով տանջի իրեն այն բանի համար, որ այդքան անզոր է երջանկացնելու սիրած կնոջը: Էլենան էլ իր հերթին տեսնելով, որ ամուսինն այդքան տխուր է, իրեն էր մեղավոր համարում և շարունակ կրկնում էր.

— Աստված իմ, ինչո՞ւ նա հարուստի հետ չամուսնացավ: Ես իհարկե վշտից կմեռնեի, բայց թե այս կյանքում ո՞ւմ եմ պետք: Անցած եռամյակում մի շրջազգեստի համար տասը ռուբլի վճարեցի... Ա՜խ, գոնե որևէ մեկը գներ այն ինձանից:

Նա այդպես էր մտածում, զգուշորեն ման գալով սենյակում ու նայելով իր ծաղիկներին: Ժամանակ առ ժամանակ նա մոտենում էր փակ դռանը և ականջ դնում: Սակայն այնտեղ լռություն էր տիրում: Բայց դրա փոխարեն խոհանոցից լսվում էր ամանների չխկչխկոցը, իսկ պատուհանից՝ դեղձանիկի ծլվլոցը:

— Այդ դեղձանիկն ինչո՞ւ է ձայնը գլուխը գցել,— նյարդայնացած ձայնով հանկարծ ասաց Վլադիսլավը:

— Հիմա, հիմա նա վերջ կտա,— պատասխանեց Էլենկան և, մոտենալով վանդակին, կիսաձայն շշնջաց,— լռի՛ր, իմ թռչնակ, լռի՛ր... Մեր տերը բարկանում է մեզ վրա: Լռի՛ր:

Դեղձանիկը նայեց նրան սկզբում մի աչքով, հետո մյուսով, պոչն աջ ու ձախ ծռեց և սկսեց ավելի բարձր ծլվլալ:

Վախեցած Էլենկան վանդակը ծածկեց սև գլխաշորով: Թռչունը լռեց:

— Այժմ նա կքնի,— շշնջաց Էլենկան և քայլեց դեպի ամուսնու սենյակը:

Ձեռքն արդեն ուզում էր տանել դռան բռնակին, բայց, վախենալով սեփական համարձակությունից, ետ քաշվեց սենյակի մեջտեղը և շունչը պահած մեկ-երկու րոպե մնաց այդպես կանգնած:

— Նրան չի կարելի խանգարել,— ինքն իրեն ասաց Էլենկան և, իր խոստումն ի կատար ածելով, բացեց դուռը:

— Դու ինձ կանչեցի՞ր, Վլադեկ,— հարցրեց նա:

— Ո՛չ:

Նա կամացուկ մոտեցավ ամուսնուն և համբուրեց նրան:

— Ինձ թվաց, թե կանչեցիր:

— Այդ դեղձանիկն ինձ կատաղեցնում է,— փնթփնթաց Վլադիսլավը:

— Ես նրան ծածկեցի, արդեն քնել է:

Նա մի անգամ էլ համբուրեց ամուսնուն:

— Իսկ եթե որևէ բան քեզ պետք լինի,— շարունակեց նա,— դու կանչիր ինձ... Ես ամբողջ ժամանակ այստեղ եմ, այն սենյակում:

Եվ կրկին համբուրեց նրան:

Հետո մի փոքր էլ նայեց ամուսնու թթված դեմքին և, ետևից ծածկելով դուռը, կամաց դուրս եկավ:

Եւ ասաց Տէր Աստուած, ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել...

Եւ ստեղծ եւս Տէր Աստուած զամենայն գազանս վայրի եւ զամենայն թռչունս երկնից.

Եւ արկ Տէր աստուած Թմրութիւն ի վերայ Ադամայ, եւ ննջեաց, եւ առ մի ի կողից նորա եւ ելից ընդ այնր մարմին. եւ շինեաց Տէր Աստուած զկողն զոր առ յԱդամայ ի կին, եւ ած զնա առ Ադամ:

II

ՄԻ ՔԻՉ ՍՏՎԵՐ

Վլադիսլավի սենյակն ընդարձակ ու լուսավոր էր, այսինքն այնպիսին, ինչպիսին պիտի լիներ ինժեների արհեստանոցը: Բացի ամենաանհրաժեշտ իրերից՝ գրասեղանից, ճոճաթոռից ու աթոռներից, այստեղ տեղադրված էր գծագրական սեղանը, խառատի և ատաղձագործի փոքրիկ հաստոցները՝ մոդելներ պատրաստելու համար, գրքեր, գծագրեր, մոդելներ, տարբեր տեսակի գործիքների հավաքածու՝ անգետների հետաքրքրությունը գրգռելու նպատակով:

Սակայն բոլոր առարկաների վրա նկատվում էր անուշադրության հետքը: Հաստոցների մոտ ոչ մի տաշեղի կտոր, ոչ մի պտղունց թեփ չկար: Սև և կարմիր տուշի ամանները չորացել էին, գծագրերը՝ դեղնել, իսկ գծագրական տախտակի վրա փակցրած կիսատ գծագրերը ծածկվել էին փոշու հաստ շերտով:

Վլադիսլավը քանիերորդ անգամ կարդում էր «Հիդրավլիկում» տպագրված հոդվածը ջրանիվների մասին: Երբ կինը ներս մտավ, նա անասելի դառնությամբ հիշում էր, որ ընդամենը մի շաբաթ առաջ նրան առաջարկեցին կազմել ջրաղացի նախագիծը, իսկ երեկ հայտնեցին, որ ջրաղացը կառուցելու է մեկ ուրիշը:

— Մի՞թե արժե տարիներով տանջվել, սեփական անձը զրկել ամեն ինչից,— շշնջում էր նա,— գիտենալով, որ այդ առավելությունն ստացած «մեկը» պարզապես ձեռքը ջրաղացների վրա վարժեցրած հյուսն է, որն իր «գծագրերն» ստեղծում էր փայտի կտորներից:

Այդ սիրտ մաշող եզրակացությամբ նա մի կողմ շպրտեց «Հիդրավլիկը» և սկսեց ինտեգրալ հաշիվներ կատարել: Նրա հայացքն ընկավ հետևյալ բանաձևին՝ T/1/ = T/2/ =1, և անմիջապես հիշեց, որ տանն ընդամենը մի ռուբլի կա:

— Եթե մենակ լինեի, ցամաք հացով մի երկու օր էլ կձգեի: Ես սովոր եմ արդեն, իսկ նա՞...

«Իմ մասին մի մտածիր, իմ Վլադիկ... ես ցամաք հացով էլ կուշտ կլինեմ: Առաջին անգամը չէ...»:

Նա շրջվեց, բայց սենյակում ոչ ոք չկար և նոր միայն հիշեց, որ Էլունյան այդ խոսքերն իրեն ասաց մի քանի օր առաջ:

«Ես որ իմ տերերի հետ եմ: Ինչպես նրանք, այնպես էլ ես»,— նրա հիշողության մեջ լսվեց Մաթեուշովայի ձայնի արձագանքը:

«Տեր աստված, ինչ եսամոլն եմ ես»,— մտածեց նա և ամոթից կարմրեց:

Սակայն ինչ էլ որ լիներ, տանը եղածը միայն մի ռուբլի էր՝ երեք հոգու համար:

Նա մի քանի էջ թերթեց և կանգ առավ հավանականության տեսության վրա:

— Եթե ես քառասուն օր շարունակ աշխատանք չեմ ունեցել, ինչո՞վ է հավանական, որ վաղը կունենամ:

— Մեկ քառասունմեկերորդով,— պատասխանեցին բանաձևերը:

— Հետաքրքիր է, իսկ ինչքա՞ն է հավանականությունը, որ ես գող կամ մարդասպան կդառնամ:

Բանաձևերը լռում էին:

Պատուհանից երևում էին հալվող ձյունով պատած տանիքները, մի քանի մրսած ճնճղուկներ և մի կտոր երկինք: Վլադիսլավը հայացքը բարձրացրեց դեպի երկինք և մտածեց, որ այժմ միայն մարտի կեսն է, իսկ մայիսից շուտ նա ֆաբրիկայում գծագրողի պաշտոն չի ստանա: Ամսական աշխատավարձը կկազմի երեսուն ռուբլի՝ տասժամյա տաժանակիր աշխատանքի դիմաց:

Նա հաշվումները մի կողմ դրեց և վերցրեց Էպիկտետի «Մաքսիմները»: Ստրուկ փիլիսոփային շատ անգամ էր հաջողվել բուժել ցավող հոգին: Վլադիսլավը բացեց գիրքը և սկսեց էջ էջի ետևից թերթել:

«Հանիր միջիցդ ցանկությունն ու վախը,— ասում էր իմաստունը,— և ազատված կլինես բռնակալից»:

«Օ, կույր, օ՜ անիրավ: Դու կարող էիր ինքդ քո տերը լինել, սակայն կախման մեջ ես դնում քեզ հազար ու մի բաներից, որ խորթ են քեզ և հեռացնում են ճշմարիտ բարուց»:

Հանկարծ Վլադիսլավը վերջ տվեց կարդալուն և լսողությունը լարեց. հարևան սենյակում շշուկներ էին լսվում:

— Պանի,— ասում էր Մաթեուշովան,— այստեղ մի կին յուղ է բերել:

— Այսօր չեմ վերցնի,— պատասխանում էր Էլունյան:

— Բայց, ինչ յուղ է: Պարոնը հենց այդ տեսակն է սիրում...

— Թող մի ուրիշ անգամ գա:

— Էլ ինչո՞ւ ուրիշ անգամ: Նա այդքան շուտ չի գա: Գիտեք ինչ... Ես իմ փողով կգնեմ, իսկ դուք ինձ հետո կվերադարձնեք: Ես տասներեք ռուբլի ունեմ:

Մի րոպե լռություն տիրեց: Վլադիսլավի ձեռքերն անզոր կախվեցին:

— Ես ձեզ արդեն ասացի, Մաթեուշովա, պետք չէ,— կտրեց Էլունյան:

Սպասուհին հեռացավ՝ քթի տակ ինչ-որ բան փնթփնթալով:

— Ես մի ռուբլի ունեմ,— շշնջաց Վլադիսլավը:

Բայց նույն րոպեին էլ հիշեց, որ այսօր չորեքշաբթի է, նշանակում է վաղը նրանց մոտ ճաշելու կգա մի աղքատ ուսանող՝ մահացած ընկերոջ եղբայրը:

«Մի ցանկացիր, որ աշխարհում ամեն ինչ քո կամքով լինի, այլ ցանկաս պիտի, որ ամեն ինչ գնա իր ընթացքով ու միշտ կլինես բավարարված»:

Վլադիսլավը ուսերը թոթվեց և փլվեց ճոճաթոռի մեջ: Այսպիսի փիլիսոփայությունը լավ է այն մարդկանց համար, ովքեր կուշտ ճաշել և վրայից էլ սև սուրճ են ըմպել, կամ էլ նրանց համար, ում մեջ ծանր աշխատանքը վաղուց սպանել է զգալու ընդունակությունը:

Ճոճաթոռի մեջ փլված և աչքերը փակած, ինչպես կվայելե մի մարդու, որ մտադիր է իր հոգու խորքերը պրպտել, միտք էր անում այն մասին, թե որպիսի չնչին պատճառները կարող են մարդուն մեծագույն տառապանք պատճառել:

— Վաղը,— կրկնում էր նա,— տանը ոչ մի կոպեկ չի լինի: Եթե մենակ լինեի, կծիծաղեի այդ բանի վրա և վերջ, բայց կինս... Ախ, նրա անձնազոհությունը կսպանի ինձ: Քառասուն օր շարունակ վերջին աղքատի նման ես խնդրեցի, աղաչեցի, որ այդ աշխատանքն ինձ տան, բայց չտվեցին... Այժմ ինժեներներն ավելի շատ են, քան կոշկակարները: Ոչ տեղ կա գնալու, ոչ էլ միտք ունի գնալ: Մեռնե՞լ... Օհ, աստված իմ, իսկ ո՞վ կմնա նրա հետ: Գուցե իրե՞ր վաճառեմ: Բայց երկու օրից արդեն նույնիսկ ճաշի փող չի լինի:

— Վլադի՛կ, Վլադի՛կ, նայի՛ր...— հանկարծ սենյակ վազելով գոռաց Էլենկան:

— Այդ ի՞նչ է:

— Ես քո բաճկոնակի գրպանում հինգ ռուբլի գտա: Վերցրեցի կարկատելու ու մեկ էլ ծոցագրպանում... Նայի՛ր:

Վլադիսլավը նստեց ճոճաթոռին, կինը նետվեց նրա գիրկը:

— Տեսնո՞ւմ ես, թե աստված որքան բարեգութ է մեր նկատմամբ... Մենք ընդամենը մեկ ռուբլի ունեինք և դու այնպես էիր մտահոգված... Կարծում ես չէի տեսնո՞ւմ, և ահա հիմա փող կա: Մի քանի օր կբավականացնի, իսկ հետո դու աշխատանքի կանցնես:

— Որտե՞ղ,— հարցրեց ամուսինը:

— Դե ես ի՞նչ իմանամ,— նրան փարվելով պատասխանեց կինը:— Ուղղակի դու պետք է աշխատանք ստանաս և վերջ: Ախր այս փողը վերջինն է:

— Երեխա՛:

— Հետաքրքիր է, թե այդ փողն ինչպե՞ս է այնտեղ ընկել:

— Հիշեցի: Ինչ-որ մեկից վերցրեցի մանրը և հինգանոցը դրեցի բաճկոնակիս գրպանը, իսկ հետո մոռացա այդ մասին, մտածելով, թե կորցրել եմ: Համարյա մի տարի է, այնտեղ է եղել:

— Այ, տեսնո՞ւմ ես, երբեք չպետք է հուսահատվել: Դե ժպտա: Ա՛յ, հիմա լավ է… Կնոջդ նույնիսկ շնորհակալություն չես հայտնում հին բաճկոնակդ վերանորոգելու համար... Ախ դու, նոթոտի մեկը, ես արդեն երեք օր է ուզում եմ լաց լինել: Սիրած կնոջ հետ չի խոսում, դեղձանիկի վրա բարկանում է, իր համար քիթը կախած նստել է անկյունում: Դեհ, կնոջիցդ ներողություն խնդրիր, շուտ, մի անգամ էլ:

Վլադիսլավը չզգաց, թե ինչպես այդ ծլվլոցի ազդեցությունից, իսկ գուցե և անսպասելիորեն գտնված հինգանոցից, վերադառնում է իր հանգստությունը: Նա ժպտաց, հիշելով քիչ առաջվա հուսահատությունը: Նույնիսկ անհասկանալի էր, որ այդպիսի դատարկ մի պատճառ, փոքրիկ գումարի առկայությունը, կարող էր ամրացնել երերացող հավասարակշռությունը, հանգստացնել ալեկոծվող հոգու հողմը:

— Ես հիմա կհրամայեմ կերակրել մեզ,– ասում էր Էլենկան։— Ճաշին մենք թանապուր ունենք՝ թթվասերով, պանրով և հացի բոված կտորներով, և մեկ էլ տապակած կարտոֆիլ:

— Ես տեսնում եմ, որ քեզ մոտ ապուրը համարյա չորս ճաշատեսակ է համարվում:

— Ոչ, ո՛չ: Ես ասել եմ, որ քեզ համար ձու խաշեն:

— Իսկ քե՞զ համար։

— Ես ձու չեմ սիրում... Բայց չգիտես ինչու հիմա ես էլ ուզեցի: Գնամ Մաթեուշովային ասեմ, թող մի քանի հատ էլ ավելացնի՝ ինձ ու քեզ համար:

Փնթփնթան Մաթեուշովան երկար չսպասելով սկսեց սեղանը պարաստել, իսկ Վլադիսլավը վանդակի վրայից հանեց շալը: Լույս տեսնելով, դեղձանիկը թռվռաց ու սկսեց ծլվլալ: Նրան միացան փողոցի ճնճղուկները, տանիքից ընկնող հալոցքի ծլթոցը և Էլենկայի ուրախ ծիծաղը:

Այդ ժամանակ դժվար էր իմանալ, թե Վլադիսլավն ինչու հիշեց մի գարնան մասին, թե ինչպես շատ վաղուց, երբ դեռ մանուկ էր, ուժեղ անձրևից հետո նա այգի վազեց: Երեկվա թառամած կանաչն այսօր փայլում էր զմրուխտի պես, երեկվա բողբոջած ծառերը միանգամից կանաչել էին մատղաշ տերևներով: Գետնին ջրափոսեր էին, երկնքում ծիածանն էր փայլում, և փոքրիկի հոգում այնպիսի մի զգացում ծնվեց, որը նա բացատրել չէր կարող:

Այդ ամենը նրան ներկայացան ամենայն մանրամասնությամբ և հիշողությունից ոգևորվելով, անմիջապես գրկեց ու համբուրեց կնոջը իսկ կինը, թռուցիկ հայացք գցելով վարագույրի կողմը, նրա արանքից դիմացի տան պատուհանում նկատեց ալ ծաղիկներով սուր թասակը և դեղնած դեմքով ծերունու խորամանկ հայացքը:

Նիհար ծերուկը ծիծաղում էր, ինչպես միշտ, ու միայն աչքերն ավելի շատ էր կկոցել: Սակայն այս անգամ Էլենկան նրա վրա չէր բարկանում: Աստծո կողմից մեր աշխարհն այնպես է ստեղծված, որ երիտասարդ ամուսիններն ուրախանան հինգանոցներով, ջահել կանայք՝ իրենց ամուսիններով, իսկ ծերունիները՝ ջահելների ուրախությամբ:

III

ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐ

Երկու օր անց նորապսակները դեռևս երեք ռուբլի ունեին, բայց աշխատանք ստանալու հեռանկար չէր երևում: Չնայած դրան, նրանք այսօր երեխայի պես ուրախանում էին, և ոչ առանց պատճառի: Նրանց հետ սեղանի շուրջ նստած էր հին ու հավատարիմ բարեկամներից մեկը՝ Վլադիսլավի հարսանիքի ազապը՝ Յուզեֆ Գրոդսկին: Ուրալյան լեռներից Լոնդոն ճանապարհվելիս նա կես օր մնացել էր Վարշավայում և որոշել էր հանդիպել բարեկամներին:

Գրոդսկին՝ մասնագիտությամբ ինժեներ, արդեն կես տարի էր, ինչ երջանկություն գտնելու հույսով ապրում էր Ասիայի հենց սահմանի մոտ: Նա ցածրահասակ էր, գեր, բաց խարտյաշ: Բամբ ձայն ուներ, շոնդալից ծիծաղ, աշխույժ բնավորություն, պայծառ միտք ու բարի սիրտ:

Վիլսկիներին նա հարազատի պես էր սիրում և հեռավոր երկրամասերից նրանց համար նվեր էր բերել՝ երկու չինական գավաթ, ոսկու մի փոքրիկ ձուլակտոր և մալախիտի մի բեկոր:

Այժմ բարեկամների հետ թեյի սեղանի նստած, նա պատմում էր իր արկածները և, պատմությունը վերջացնելով, նրանց դիմեց հետևյալ խոսքերով:

— Ահա այսպիսի բաներ: Ձեր գործերն ինչպես են: Ես թեպետ և աշխատեցի իմ վեց հազարը, բայց մի երկրում, ուր թաշկինակ գործածողին ու կարճ գուլպա հագնողին կասկածանքով են նայում, եթե մարդ ուզում է եվրոպական ձևով ապրել, շատ փող է ծախսում: Հազիվ-հազ կարողացա մի հազար ռուբլի ետ գցել և այսօր Վարշավայի բանկը դրեցի: Աղքատ եմ, հը՞:

Այս լսելով, Էլենան անասելի դառնությամբ իր քաղցրիկ կապույտ աչքերը դարձրեց դեպի ամուսինը, իսկ Վլադիսլավը հազիվ նկատելի հոնքերը կիտեց: Գրոդսկին անմիջապես որսաց աղքատ մարդկանց հայացքները, ինչ-որ բան հասկացավ և ասաց.

— Չափից դուրս շատ է իմ աշխատանքը: Ինձ պատվիրել են գոլորշիով աշխատող փայտասղոցարանի և աղացի նախագծերը կազմել: Ես այն տեսակետն ունեմ, որ երկաթը տաք-տաք են ծեծում: Երկուսն էլ միանգամից վերցնում եմ՝ ամեն մեկը երեք հարյուր ռուբլու: Փողն էլ սկզբից, հիմա էլ, իսկական պատիժ, պետք է տեխնիկ գտնեմ, որպեսզի գործը գլուխ բերի, իսկ ժամանակը սուղ է:

— Գուցե Վլադե՞կը...— մինչև ականջները կարմրելով շտապ մեջ մտավ Էլենկան:

Վլադիսլավն ասես ասեղների վրա էր նստած...

— Վլադե՞կը,— պատասխանեց Գրոդսկին:— Ես, իհարկե, մեծ հաճույքով այդ գործը նրան կհանձնարարեի, եթե միայն նա բարեհաճեր համաձայնել: Վլադիսլավ, դու ի՞նչ կարծիքի ես:

— Համաձայն եմ:

— Բռավո: Ես կարծում եմ, որ այս գործարքը կապելու համար այսքանն էլ բավական է: Փողն ու ցուցմունքները դու կստանաս անմիջապես:

Այս ասելով, ինժեները գրպանից հանեց հեքիաթային մեծության մի դրամապանակ՝ լիքը լցված փողերով, մուրհակներով ու նոթատետրերով, այնտեղից դուրս բերեց ամբողջովին թվերով լցված մի թուղթ և վեց հատ հարյուր ռուբլիանոց թղթադրամ, դրեց սեղանին:

— Դու նույնիսկ պատկերացնել չես կարող, թե ինչպես փրկեցիր մեզ,— բացականչեց Վլադիսլավը, Գրոդսկու ձեռքը ամուր սեղմելով:

Այնուհետև պատմեց իր վիճակի մասին:

— Անամոթնե՛ր,— բացականչեց ինժեները:— Եթե դուք գոնե մի բառ գրեիք ինձ, ես ձեզ մի երկու տարով մի քանի հարյուր ռուբլի պարտք կտայի և այն էլ առանց տոկոսների:

Ընդմիշտ բարեկամ մնալու մասին միմյանց խոստումներ տալուց և շնորհակալական խոսքեր ասելուց հետո խոսակցությունը, բնականաբար, այլ հունով գնաց:

— Լսիր, Վլադիսլավ, իսկ ինչպե՞ս է լինում միության և ֆաբրիկայի մասին մեր կազմած ծրագրերի հարցը,— ծիծաղելով ասաց Գրոդսկին:

— Գրասեղանի վրա հասունանում է,— նույն ձևով պատասխանեց Վլադիսլավը:

— Պետք է ձեզ ասեմ,— Էլենային դիմելով ասաց Գրոդսկին,— որ ձեր ամուսինը օրը մի նոր նախագիծ էր ստեղծում և անպայման ֆիլանտրոպիկ ոճով: Բայց պետք է նաև ասեմ, որ այդ նախագծերը շատ խելացի էին: Դրանց մեջ կար մեկը, որով նա դեռևս ուսումնարանում պտտեցրել էր մեր գլուխները: Այն է՝ հայրենիք վերադառնալուց հետո, երբ փող ունենանք, կտավի ֆաբրիկա բացենք:

— Որի համար դուք առայժմ հազար ռուբլի ունեք, իսկ Վլադիսլավը՝ կին,— նրան ընդհատեց Էլենան:

— Ինչ արած, դա էլ կապիտալ է,— համաձայնեց Գրոդսկին:— Ուրեմն այսպես: Պետք է ձեզ ասեմ, որ մենք հաստատ որոշել էինք մեր ֆաբրիկայի միջոցով մեր երկրից դուրս մղել արտասահմանյան կտավը և միանգամայն վերափոխել հայրենական ձեռնարկությունները: Վլադիսլավը, հոգուտ բանվորների, օդափոխման նոր սիստեմ էր նախագծել: Հետո, մեծահասակների համար՝ ընթերցասրահ, ինչ-որ անսովոր մի դպրոց՝ երեխաների համար և դասընթացների պես մի բան՝ գործնական աշխատանքների համար:

— Պատրանքներ,— տխուր ասաց Վլադիսլավը:

— Թույլ տուր քեզ ասեմ,— հակաճառեց Գրոդսկին,— որ մեր երիտասարդական երազանքներն ինձ համար ավելի հաճելի են, քան հարբեցողությունն ու գերմանական բուրշերի սանձարձակությունը: Քեզ ավելին կասեմ. քո այդ երազանքները օտարության մեջ եղած ժամանակ մեզ սովորեցնում էին մտածել հայրենիքի ու նրա կարիքների մասին, և հենց քո այդ երազանքներով էլ դու գրավեցիր մեր սրտերը: Թևերդ կախ մի գցիր: Ո՞ւժ չենք ունենա ստեղծելու ֆաբրիկա, ուրեմն առաջնակարգ դարբնոց կկառուցենք: Ուսումնարան բացել չե՞նք կարողանա, ուրեմն կփորձենք օրինակելի արհեստանոց ստեղծել: Ես հանձնվելու մտադրություն չունեմ: Ես կանգնած եմ հարստանալու ճանապարհին և խոսք եմ տալիս, որ երբ այն անցնի տաս հազարից, քեզ քո պլանների մասին ես դեռ կհիշեցնեմ:

Խոսելիս ինժեների աչքերը փայլում էին: Իր ողջ տեսքով նա ոգևորություն էր արտահայտում և, ամենակարևորը, այնպիսի հավատ ուներ սեփական ուժերի նկատմամբ, որը, ցավոք, չէր բավականացնում կյանքի դառնություններից կքած Վլադիսլավին:

— Եվ որքա՞ն փող է հարկավոր այդ ֆաբրիկայի համար,— գլուխն օրորելով ձայնեց Էլենկան:

— Իհարկե շատ: Բոլոր դեպքերում, եթե ձեր ամուսինը կարողանար երկաթը տաք-տաք ծեծել, ապա իր ֆաբրիկան նա վաղուց կառուցած կլիներ:

— Ե՞ս: Իսկ ինչպե՞ս,— զարմացած հարցրեց Վլադիսլավը:

— Հա՛-հա՛-հա՛, անուշիկս, չե՞ս հասկանում,— ճչաց Գրոդսկին,— ֆաբրիկայի մասին հարկավոր էր մտածել կես տարի առաջ, երբ տիկին Վելտը վառվում էր քեզ համար...

— Ինձ համա՞ր... տիկին Վե՞լտը...— կրկնեց իրեն կորցրած Վլադիսլավը:

— Օ՛, հիմարիկ, օ՛ անմեղ գառնուկ,— բացականչեց Գրոդսկին:— Բարձրաշխարհիկ հասարակության մեջ բոլորը գիտեին, որ այդ հաճելի տիկինը խելագարվում է քեզ համար, իսկ դու այդ մասին մինչև հիմա չգիտես: Հա՛-հա՛-հա՛...

Խոսակցությանն ունկնդրելով, Էլենկան լրիվ մոռացել էր ինքնաեռի մասին և տաք թեյն անարգել հոսում էր բաժակների կողքերով: Այդ փոքրիկ միջադեպի հետևանքով խոսակցությունն այլ հուն ստացավ, և Վլադիսլավը կարողացավ ծածկել իր շփոթությունը՝ որքան ամոթալի, նույնքան և անսպասելի:

Ժամը տասնմեկին մոտ Գրոդսկին, որը վաղ առավոտյան պետք է մեկներ, հրաժեշտ տվեց իր բարեկամներին և վերջում ասաց.

— Պանի Էլենա, եթե դուք դժվար կացության մեջ լինեք և ինձ չհայտնեք, ես ձեզ կատեմ:

Հուզված Էլենկան սրտանց սեղմեց նրա ձեռքը:

— Իսկ դու, Վլադիսլավ,— շարունակեց ինժեները,— գործի կպիր, բռնիր նրա կոկորդից և փող քամիր: Ազնիվ խոսք, դու միակն ես, ծույլի մեկը, որի ձեռքին ես կուզենայի միլիոններ տեսնել: Գիտեմ, որ դու անմիջապես այն կծախսեիր, բայց նաև գիտեմ, որ կծախսեիր քեզ համար, հասարակության համար ու քո մտերիմների համար:

Երբ Գրոդսկին գնաց, Էլենկան սկսեց սեղանը հավաքել, իսկ Վլադիսլավը մտահոգ քայլում էր սենյակում, նա երկու մտահոգություն ուներ. Յուզեֆի առաջարկած գործը և... Երկրորդը Վլադիսլավը ի սրտե ցանկանում էր դուրս գցել իր գլխից:

«Հնոցները հարկավոր է պղնձագործի մոտ պատվիրել»,— մտածում էր նա:

«Տիկին Վելտը սիրել է քեզ»,— շշնջում էր ուրիշ մի ձայն:

«Հետաքրքիր է, նրանք որքա՞ն կարժենան»,— ինքն իրեն ասում էր Վլադիսլավը:

«Նա քեզ սիրում էր, լսո՞ւմ ես»,— կրկնում էր նույն ձայնը:

Վլադիսլավը գնաց իր սենյակ և սկսեց Գրոդսկու թողած հանձնարարականները նայել: Հանկարծ նա թեքեց գլուխը: Նրան թվաց, թե ինչ-որ մեկը կանգնած է իր աթոռի ետևում և շարունակ շշնջում է.

«Նա քեզ սիրում էր...»

Նյարդայնացած Վլադիսլավն իրեն նետեց ճոճաթոռի վրա ու ձեռքերը դնելով գլխի տակ, հայացքը հառեց առաստաղին և ահա թե ինչ երևաց նրան:

Մի գեղեցիկ օր հազվադեպ գեղեցկության տեր մի երիտասարդ սերթուկը հագին, որը հատուկ է միայն խնդրարկուներին, մտավ բանկիր Վելտի առանձնասենյակը:

Ճանաչված ֆինանսիստը նստած էր գրքերով ու գրոտած թղթերով լի գրասեղանի մոտ... ու կարդում էր: Նա այնքան էր խորացած ընթերցանության մեջ, որ մոտ երկու րոպե հետո միայն բարեհաճեց նկատել երիտասարդ այցելուին, որն իր հասարակ հոգով մտածեց, թե իր դիմաց հավանաբար հանճար է նստած:

Խոր մտածմունքներից ուշքի գալով, մի փոքր բարձրացրեց գործած թասակն ու ասաց:

— Ա՜, պան Վիլսկի... հազար անգամ ներողություն եմ խնդրում: Դուք ինձ թույլ կտա՞ք թասակը չհանել: Հասկանո՞ւմ եք, ուղեղի ջղաձգումներ ունեմ: Ուղեղի այնպիսի ծանրաբեռնվածություն... Ինչո՞վ կարող եմ ծառայել:

Պատասխանի փոխարեն Վիլսկին նամակը մեկնեց նրան: Բանկիրը նայեց կնիքին և հանեց թասակը:

— Ինչպես չէ, գիտեմ: Սա իմ ընկերոջից է, իշխան... Մենք միմյանց հաճախ ենք գրում: Հոյակապ երիտասարդ է, սակայն անուղղելի դեմոկրատ:

Նա բացեց ծրարը և սկսեց կարդալ՝ ժամանակ առ ժամանակ բարձրաձայն ընթերցելով:

— «Ձեր հարգալից ուշադրությանն եմ առաջարկում իմ միանգամայն... Այդպես, այդպես... «մեխանիկական բաժնի ամենաաշխատասեր ուսանողը»... Շատ հաճելի է: «Մեծ ոսկե մեդալ...» Պան Վոլսկի:

— Իմ ազգանունը Վիլսկի է:

— Ասացեք, պան Վիլսկի, իսկ դա, ձեր այդ մեդալը, իսկապե՞ս մեծ է:

— Այո:

— Իհարկե, իհարկե: Նստեցեք, խնդրեմ: Ինձ մոտ ձևականություններ չկան:

Նամակը մինչև վերջ կարդալուց հետո Վելտը կրկին խոսեց:

— Այս նամակով մեր տան դռները միշտ բաց են ձեզ համար: Մեր բարեկամների բարեկամները մեր բարեկամներն են: Այսօրվանից սկսած խնդրեմ, երեկոյան ինն անց կեսին համեցեք թեյի: Ընդունում ենք չորեքշաբթի օրերը:

— Ես չե՞մ կարող հույս ունենալ...– ակնարկեց Վիլսկին:

— Իմ կնոջ սրահում դուք անկասկած կարող եք հանդիպել ընտրյալ հասարակության:

— Ներեցեք, ես նկատի ունեի իմ ծառայությունը:

— Ախ, դուք նկատի ունեք ծառայությո՞ւնը: Մենք այդ մասին դեռ կխոսենք:

Վիլսկին գլուխ տվեց և մոտեցավ դռանը, իսկ բանկիրը նրա ետևից ձայն տվեց.

— Մի վայրկյան, պան Վիլսկի: Երբ իշխանին նամակ կգրեք, խնդրում եմ իմ կողմից խոնարհ բարևներ հաղորդեք:

Հենց նույն երեկոյան թեյի սեղանի մոտ Վիլսկին ծանոթացավ տիկին Վելտի հետ: Դա ծաղկման շրջանում գտնվող կին էր, ոչ այնքան գեղեցիկ, որքան՝ վեհապանծ ու թովիչ: Նրա թուխ դեմքը շատ նուրբ էր ու խիստ, իսկ սև աչքերն անբացատրելի ուժով խելքահան էին անում տղամարդկանց:

Այդ երեկո տանտիրուհին մի քանի անգամ խոսեց Վիլսկու հետ, իսկ վերջինս ոտքից մինչև գլուխ զբաղված լինելով իր նախագծերով, միայն այդ մասին էր խոսում: Բանկիրի կինը ուշադիր լսում էր նրան և այնպես սևեռուն էր նայում, որ տուն վերադառնալուց հետո Վլադիսլավը երկար ժամանակ չէր կարողանում քնել:

Հաջորդ օրը Վելտը Վիլսկուն շատ օգտավետ գործ հանձնարարեց և կրկնեց, որ վերջինս կարող է ավելի հաճախ լինել իր տանը:

«Նա քեզ սիրում էր...»— համառորեն փսփսում էր նույն ձայնը և դրա ազդեցության տակ այժմ Վիլսկու հիշողության մեջ միանգամայն ուրիշ լույսի տակ արթնացան շատ նոր մանրամասներ:

Մի օր, հերթական չորեքշաբթի օրերից մեկը, երբ տիրուհին ու Վիլսկին խոսում էին ուսանողական կյանքի մասին, նրանց միացավ մի բամբասկոտ և սկսեց պատմել ինչ-որ կնոջ մասին, որը փախել էր իր սիրեկանի հետ:

— Կանայք հանուն սիրո շատ բաների են ընդունակ,— քմծիծաղով ասաց վերջինս:

Տիկին Վելտը շատ սառը նայեց նրան և երբ նա հեռացավ, իր հանգիստ, կրծքային ձայնով Վիլսկուն ասաց.

— Այո, կանայք իսկապես հանուն սիրո շատ բանի են ընդունակ, սակայն տղամարդիկ դա գնահատել չեն կարողանում:

Այդ ասելով, նա առանց Վիլսկուն նայելու վեր կացավ և գնաց միանալու հյուրերի մի ուրիշ խմբի:

Մի ուրիշ անգամ, երբ Վլադիսլավը տիկնոջ առջև սիրտը բացած պատմում էր շինարարական ընկերության պլանների մասին, հանկարծ տիկին Վելտը ընդհատեց նրան և հարցրեց.

— Կանանց հետ դուք մի՞շտ ինժեների աշխատանքի մասին եք խոսում միայն:

— Նայած ինչպիսի կանանց,— առարկեց Վիլսկին:— Ոմանց հետ խոսում եմ արվեստի մասին: Սակայն դա ձանձրալի թեմա է:

— Ահա թե ինչ,— նկատեց տանտիրուհին:— Դե, որևէ բան պատմեցեք:

Գլուխը ետ գցած աթոռի թիկնակին, կիսափակ աչքերով ու դեմքին զմայլանքի արտահայտություն տված, նա լսում էր Վիլսկու եզրահանգումները հիմքի ասֆալտապատման, ջրախողովակների և բնակելի տներում գազ անցկացնելու մասին և արդեն քանիերորդ անգամ՝ երկաթյա ծածկերի մասին:

Վիլսկին դժվար կացության մեջ էր: Նա հարսնացու ուներ, որին սիրում էր, սակայն շարունակում էր ընկերություն անել ուրիշ կնոջ հետ, որն աներևույթ ուժով ձգում էր իրեն: Տիկին Վելտի հետ խոսելիս նա զգում էր, թե ինչպես են իր մկանները հալած արճիճով լցվում, բայց այդ զգացումը երբեք չէր տիրում նրան:

Երբեմն տիկնոջ հայացքներից ոգևորված, Վլադիսլավը փորձում էր սիրո մասին որևէ բան խոսել, սակայն հենց առաջին փորձերից տիկնոջ դեմքը սառում էր, իսկ շուրթերին արհամարհանքի ու

զզվանքի արտահայտություն էր երևում: Այդ ժամանակ Վիլսկին անմիջապես խոսակցությունն ուրիշ հունով էր տանում, և կրկին ամեն ինչ լավ էր լինում:

Այդ հանելուկը սկզբում Վիլսկուն անհարմար կացության մեջ էր դնում, բայց նա կամաց-կամաց սովորեց դրան և ինքն իրեն ասում էր. «Շատ ափսոս, որ այդ կինն այդքան սառն է և ընդունակ է մտածել միայն ֆինանսական ու տեխնիկական հարցերի մասին: Եթե այդպես չլիներ, նրան ճանաչողները կխենթանային նրա համար և, առաջին հերթին, իր ամուսինը»:

Եվ ահա այդ կինը, Գրոդսկու ասելով, խենթանում էր իր՝ Վիլսկու համար:

— Չի կարող պատահել,— ինքն իրեն խոսեց Վիլսկին:

Սթափվելով իր պատրանքներից, վեր կացավ ճոճաթոռից.

— Տիկին Վելտը մարմարից ու փողերից է ստեղծված:

— «Բայց և այնպես նա քեզ սիրում էր»,— փսփսաց նույն ձայնը:

— Հիմարությո՛ւն,— ծիծաղելով ընդհատեց Վիլսկին,— սիրում էր, իսկ նրա ամուսինը լրիվ հրաժարվեց ինձ աշխատանք տալուց:

«Երբվանի՞ց»,— հարցրեց ձայնը:

— Հենց իմ հարսանիքի օրից,— պատասխանեց Վիլսկին,

«Այսինքն այն օրվանից, երբ տիկին Վելտն, իմանալով քո ամուսնության մասին, ծանր հիվանդացավ»,— եզրակացրեց ձայնը:

Վիլսկու ճակատը պատվեց սառը քրտինքով: Նա մոտեցավ պատուհանին և սկսեց լսել անձրևի աղմուկը:

Ինչ-որ մեկը մատների ծայրերի վրա մոտեցավ նրան, փարվեց վզին, իր խոնավ շուրթերով կպավ նրա այրվող շուրթերին և ամաչելով կամաց հարցրեց:

— Չէ՞ որ դու նրան չես սիրում:

Վիլսկին ուշքի եկավ:

— Միայն քեզ եմ սիրում, Էլունյա, միայն քեզ... և իմ աշխատանքը:

— Իսկ ինձ գոնե մի կաթիլ ավելի չե՞ս սիրում... ա՛յ այսպիսի փոքրիկ մի կաթիլ...

— Այ այսպիսի մեծ-մեծ,— ծիծաղելով պատասխանեց ամուսինը, և ուրվականները չքացան:

IV

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԺՊԻՏԸ

Ապրիլի սկիզբն էր: Ձյունը հալվեց, և փողոցներում գարնան շունչը զգացվեց: Մի անգամ քաղաքից տուն վերադառնալիս Վլադիսլավը կնոջ համար մի քանի հատ կանաչ խոտ բերեց և ասաց նրան,

որ դաշտում արդեն արտույտներ են երևացել և որ այսօրվանից նա նստում է Գրոդսկու պատվերը կատարելու:

Պատվերը նա ավելի շուտ չէր կարող սկսել, քանի որ տեղացի ինժեներներից մեկը նրան շտապ գործ էր հանձնարարել, որը կատարելու համար նա երկու շաբաթ գիշեր ու ցերեկ աշխատել էր:

Վերջապես հիմա նա թուղթն ամրացրեց գծագրական տախտակի վրա ու սրեց մատիտը:

— Վլադիկ, իսկ գիտե՞ս, որ շուտով մենք երկրորդ փեղկերը կհանենք... Ա՛խ, ներիր... Ես քեզ խանգարում եմ: Այլևս երբեք-երբեք չեմ անի: Գուցե տուշը մաքրե՞մ:

Այդ ժամանակ ինչ-որ մեկը նախասենյակ մտավ:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Էլենկան:

— Պարոն Վլադիսլավ Վիլսկուն հեռագիր կա, Կրակովից: Խնդրում եմ ստորագրեք և ստանաք:

— Կրակովի՞ց,— հեռագիրը ստանալով, մի փոքր զարմացած ձգեց Վլադիսլավը:— Էլունյա, տուր նրան տաս գրոշ:

Նա ավելի շատ զարմացավ, երբ բացեց հեռագիրն ու կարդաց հետևյալը

«Ռ. Հ. Էդվարդի հավատարիմ ծառան ողջույններ է հաղորդում:

Թաղումը երեկ էր: Սպասում եմ կարգադրության:

Կլոպոտովիչ»

— Այդ ի՞նչ է նշանակում,— հարցրեց Էլենկան:

— Չեմ հասկանում,— պատասխանեց Վլադիսլավը:— Ամենայն հավանականությամբ իմ հորեղբայրը մահացել է, իսկ նրա կառավարիչը՝ խելագարվել:

— Հորեղբայրդ մահացե՞լ է: Այն հարո՞ւստը: Գուցե նա քեզ որևէ բան է թողել, հը՞:

— Դա նման չէ նրան: Նա ինձ միայն մեկ անգամ է երեսուն ռուբլի տվել և չեմ կարծում, թե մահվանից հետո առատաձեռն է դարձել:

— Համենայն դեպս այստեղ ինչ-որ բան կա,— ասաց Էլենկան:

— Է՛հ, ի՞նչ կարող է այնտեղ պատահել,— աշխատանքի անցնելով ասաց Վլադիսլավը:

Քառորդ ժամ անց Էլենկան կրկին ասաց:

— Գոնե մի տաս հազար թողներ քեզ...

— Մի անհանգստացիր, չի թողել:

— Դե որ այդպես է, համբուրիր քո կնոջը:

Վլադիսլավը շատ բարեխղճորեն կատարեց կնոջ հրամանը, և շարունակեց աշխատել:

Մեկ ժամ անց ստացվեց երկրորդ հեռագիրը՝ հետևյալ բովանդակությամբ:

«Իշխան Պ-ն հռենոսյան առանձնատանը հիսուն հազար հռենոսյան է տալիս:

Հանգուցյալը վճարել էր երեսուն: Սպասում եմ մեկ շաբաթ

Փաստաբան

Իքս»:

— Այնտեղ բոլորը խելագարվե՞լ են, ինչ է,— հեռագիրը հատակին շպրտելով փնթփնթաց Վլադիսլավը:

— Ո՛չ, սիրելի Վլադիկ, ինձ թվում է, որ այստեղ ինչ-որ բան կա,— ասաց հուզված Էլենկան:— Հավանաբար այդ առանձնատունը հորեղբայրդ քեզ է կտակել:

— Մանկական երազանքներ: Նա ողջ կյանքում ինձ մարդու տեղ չէր դնում...

— Ինչ էլ լինի, անհրաժեշտ է որևէ բան անել:

— Ես անում եմ այն, ինչ անհրաժեշտ է՝ Գրոդսկու գծագրերը: Այդ ժամանակ բերեցին երրորդ հեռագիրը:

«Կրակով, ամսի այսինչին: Ինժեներ-մեխանիկ Վլադիսլավ Վիլսկուն, Վարշավա: Հանգուցյալ Էդվարդ Վիլսկին ձեզ է կտակել հարյուր հազար հռենոսյան առձեռն՝ անշարժ կարողության հնգակի գումարը: Կտակն ինձ մոտ է: Թաղումը՝ երեկ: Սպասում եմ կարգադրության:

Փաստաբան Իգրեկ»:

— Մի՞թե դա հնարավոր է, Վլադեկ,— ծափ զարկելով բացականչեց Էլենկան:

Փոստատարը դեռևս կանգնած էր սենյակում:

— Ձերդ պայծառափայլություն, շնորհավորում եմ բարի լուրի առթիվ,— ասաց նա:

Վլադիսլավը նրան մեկ զլոտի տվեց: Փոստատարը ծոծրակը քորելով ու դժգոհ փնթփնթալով դուրս եկավ:

— Վլադիկ,— նորից բացականչեց Էլենկան,— դե վեր կա՛ց, գնա՛:

— Ո՞ւր:

— Դե ես չգիտեմ, երևի հեռագրատուն...

— Ինչո՞ւ:

— Դե ես ի՞նչ գիտեմ... Աստված իմ, ինչպիսի երջանկություն:

Նա վազեց իր սենյակը և ծնկի իջավ սրբապատկերների առջև: Հետո անմիջապես վեր թռավ, վազեց խոհանոց փաթաթվեց զարմացած և ուրախացած Մաթեուշովային: Հետո կրկին ծնկի իջավ և սկսեց աղոթել:

Աշխատասենյակ մտնելով, նա ամուսնուն նորից գծագրատախտակի մոտ գտավ:

— Վլադիկ, դե թող դրանք,— բացականչեց նա։— Քեզ ինչո՞ւ ես այդպես պահում, ասես ոչինչ էլ չի պատահել: Դու ինձ ուղղակի վախեցնում ես... Ասա, իսկ որքա՞ն դա կանի մեր փողով:

— Մոտ կես միլիոն,— հանգիստ պատասխանեց Վիլսկին:

— Եվ դա քեզ բոլորովին չի՞ ուրախացնում: Նույնիսկ ա՛յ այսքա՞ն:

Վլադիսլավը մատիտը մի կողմ դրեց, ընդգծված լրջությամբ բռնեց կնոջ ձեռքերը և, նայելով նրա աչքերին, արտաբերեց.

— Ասա, Էլունյա, հենց այս րոպեից իմ ուժերը, առողջությունը, խելքս, ազնվությունս ավելացա՞ն: Իհարկե, ոչ, ճի՞շտ է: Բայց չէ՞ որ դա ամենաթանկ բանն է:

— Այնուամենայնիվ կես միլիոն...

— Մենք այդ փողերի գանձապահներն ենք միայն: Նրանք մեզ չեն պատկանում: Դե ինքդ ասա, մենք կարո՞ղ ենք ուտել այդ փողերը, խմել կամ ծախսել ուրախությունների վրա: Եվ եթե նույնիսկ այդպես անեինք, դա ազնի՞վ կլիներ:

Էլենկան ոգևորված գրկեց նրան ու համբուրեց:

— Սիրելի ամուսինս,— բացականչեց նա,— ես քեզ չեմ կարողանում հասկանալ, բայց տեսնում եմ, որ դու բոլորովին նման չես ուրիշներին:

Քիչ անց, ինչպես միշտ, նա փոխեց դեղձանիկի ջուրը, ուտելու համար սերմ լցրեց և նստեց ամուսնու վերնաշապիկը կարելու:

«Այս կտորը,— մտածեց նա,— այսօր բոլորովին չբարակեց: Ճիշտ է ասում Վլադեկը՝ փողը ոչինչ չի փոխում:

Նա արդեն բոլորովին հանգստացել էր:

Իսկ Վիլսկին շարունակում էր գծագրել: Երբ մթնեց, նա լուռ սկսեց քայլել աշխատասենյակում, հետո վառեց լամպը և կրկին շարունակեց գործը:

Միայն այժմ նկատեց, որ հաշվառումների մեջ լուրջ սխալ է թույլ տվել: Նա պատռեց գծագրերը և թղթի կտորներից մեկի վրա սկսեց գրել ինչ-որ թվեր ու հավասարումներ, որոնցից վերջինը 25000 էր:

— Քսանհինգ հազար,— շշնջաց նա,— դա օրական վաթսուն ռուբլուց ավելի է անում առանց հոգսի ու ցավի ապրելու համար:

«Որտե՞ղ ավելի հարմար կլինի օգտագործել այդ փողերը,— շարունակում էր նա։— Բաժնետոմսերն այժմ հաստատուն չեն, մեկ էլ տեսար՝ հրդեհ. գողերը... Բա՞նկ: Սակայն ո՞ր բանկը կարող է դրանց ապահովությունը երաշխավորել: Տա՞նը... իսկ պատերազմը՞, հրանոթային կրակը՞:

«Իսկական երջանկությունը,— հիշեցրեց նրան Էպիկտետը,— հավերժական է և ոչնչացման ենթակա չէ: Այն ամենը, ինչ չի ենթարկվում այդ երկու հատկություններին, իսկական երջանկություն չէ»:

Վիլսկին այդ բառերի արձագանքը լսեց իր հոգում, բայց նրանց նշանակությունը չհասկացավ: Նման մտածելակերպը նրա համար այժմ դատարկ հնչյունի էր վերածվել և նրանց իմաստը հիմա գոլորշիանում էր աղքատության հետ միասին: Նրանց փոխարեն նրա ուղեղում այժմ լրիվ ուրիշ մտքեր էին լողում՝ լուսավորված մինչև այժմ անհայտ ու անբացատրելի փայլով:

«Ամենաբարձր հաստատակամությունը,— ապացուցում էր Լարոշֆուկոն,— կայանում է նրանում, որ լավ իմանաս ամեն մի ապրանքի իսկական գինը»:

— Իսկ ես,— շշնջաց Վիլսկին,— մինչև այժմ չգիտեմ քսանհինգ հազարի տարեկան եկամուտի չափը:

Արդեն շատ ուշ էր: Հոգնած Էլենկան զգուշությամբ բացեց դուռը:

— Դու դեռ աշխատո՞ւմ ես:

— Այո,— գլուխը չբարձրացնելով ասաց նա:

— Բարի գիշեր... Ինչ տաք է ճակատդ:

— Ինչպես միշտ:

— Այսօր դու ավելի շուտ կարող էիր պառկել: Չէ՞ որ դու հիմա փող ունես: Բարի գիշեր:

Նա սխալվում էր: Մեծ փողերը չեն թողնում քնելու:

Վիլսկին հանկարծ հիշեց Գրոդսկու մասին: Ինժեների մասին հիշողությունից նա կարմրեց:

— Հիանալի տղա է,— արտաբերեց նա,— սակայն սարսափելի անբարեկիրթ է:

Նրա գլխում հազար ու մի միտք էր ծագում. կտավի ֆաբրիկայի, իր ծեր մորաքրոջ, աղքատ ձեռնոց կարողի, որն ինչ-որ ժամանակ իրեն ձրի ճաշերով էր կերակրել, գործողությունների մասին, մարդկանց բարօրության համար իր պլանների մասին.... Հիշեց նաև հայտնի փիլիսոփա ու հոռետես, ավագագույն սերթուկը հագին ինչ-որ ծերուկի, որի հետ նա ծանոթացավ Փարիզում: Նրա մոտ էլ Վլադիսլավը շատ էր խոսում իր հիանալի պլանների մասին: Ծերուկը սովորաբար նրան լսում էր բարեհոգի ծաղրական ժպիտը դեմքին և վերջում միշտ ասում էր.

— Մեծ մտքերն իր շատ ու շատ վատ կողմերով ունեն նաև մի լավ հատկություն: Այսինքն՝ նրանք ծառայում են որպես մանանեխի սպեղանի ուղեղների բորբոքման դեպքում, ընդունակ, բայց աղքատ երիտասարդների համար միայն:

— Ճիշտ որ այդպես է,— շշնջաց Վիլսկին:— Իմ հարստությունը շատ մեծ է, որպեսզի այն քամուն տամ, բայց և շատ փոքր է, որպեսզի նրանով երջանկացնեմ ողջ երկիրը: Եթե ես այն բաժանեմ իմ հայրենակիցների միջև, ամեն մեկին տասներեք գրոշից էլ պակաս կհասնի:

Այդ ոգևորող եզրակացությամբ էլ նա սահմանեց իր մտածմունքները: Վիլսկին վեր կացավ բազկաթոռից և սկսեց շրջել սենյակում այնպիսի մարդու տեսքով, որն արդեն շատ լավ գիտե, թե ինչ է անելու:

«Բարեգործներն անէանում են շահամոլության գրկում, ինչպես գետերը՝ ծովում»,— ասել է Լարոշֆուկոն: Ճիշտ էր:

Վլադիսլավի գլուխն այրվում էր, քունքերում մուրճի հարվածներ էր զգում: Նա բացեց օդանցքն ու խոր շունչ քաշեց: Փողոցում կեսգիշեր էր ու լռություն: Սենյակում լամպի նավթը վերջանում էր:

Երբ գլուխը թեքեց, նրան թվաց, թե դիմացի պատը հալվեց կիսախավարում, ու նրա հայացքի առջև բաց արեց նրբաճաշակ մի զարդասենյակ՝ հարուստ կահույքով ու անուշահոտություններով լցված: Մուգ կանաչ գույնի թավշյա բազկաթոռում նստած, ավելի շուտ կիսապառկած էր ինչ-որ կին: Գլուխը ետ գցած բազկաթոռի թիկնակին, նրա կիսափակ աչքերով թուխ դեմքի վրա հիացմունքի արտահայտություն կար:

«Գոնե մի բան ասա,— շշնջաց տեսիլքը,— թող գոնե ձայնդ լսեմ»:

Վիլսկին նետվեց դեպի պատը:

— Ա՜խ, ա՜խ,— Էլենայի սենյակից տնքոցի ձայներ լսվեցին:

Վիլսկին այժմ արդեն նետվեց կնոջ սենյակը:

— Էլունա՛, քեզ ի՞նչ է պատահել,— գոռաց նա:

— Այդ դո՞ւ ես,— Վլադիկ... Ոչ, ոչինչ... Ինչ-որ երազ տեսա, բայց չգիտեմ թե ինչ...

— Գուցե մեր միլիոննե՞րը,— ժպտալով հարցրեց նա:

Սակայն կինը չպատասխանեց: Նա քնած էր:

V

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Առհասարակ սատանան ու խենթությունը մարդկանց վրա գիշերն են իշխում, իսկ ցերեկն առողջ դատողության հայրն է: Լույսը բացվելուն պես Վիլսկին ամոթով հիշեց երեկոյան տեսիլքներն ու հանգստացած սկսեց մտածել այն պարտականությունների մասին, որի համար, ճիշտ է, ոչ ոք նրան չէր ստիպում, բայց որոնք հասցրել էին արմատներ գցել նրա հոգում:

Խղճի ու ճշմարտության ձայնը նրան հիշեցնում էր այն մարդկանց գոյության մասին, որոնք ժամանակին իրեն օգնել էին, և այն պլանների մասին, որ հիմա կարող էր ի կատար ածել: Նա շատ թարմացած անկողնուց վեր կացավ, արագորեն հագնվեց և գնաց հեռագրատուն: Նա պատրաստվում էր իր մասին տեղյակ պահել Գրոդսկուն և հրավիրել նրան ընդհանուր գործի մեջ մտնելու համար:

Որ՞ գործի,— նա դեռևս ինքն էլ չգիտեր:

Ճանապարհի կեսին նրան ինչ-որ ձայն կանգնեցրեց: Ետ նայելով, նա տեսավ մի կառք, որի միջից իջնում էր Վելտը:

— Դուք ինձ մոտ էիք գնում,— առարկություն չընդունող տոնով ասաց բանկիրը:— Շնորհավորում եմ: Նման բաներ հազվադեպ են պատահում:

— Դուք ի՞նչը նկատի ունեք:

— Իհարկե ձեր միլիոնները: Ես ամեն ինչ գիտեմ, հեքիաթային բախտավորություն: Իմ դրամարկղը ձեր տրամադրության տակ է: Հենց այսօր էլ կարող եմ ձեզ հարյուր հազար առաջարկել ութ տոկոսով: Ավելի էժան դուք ոչ մի տեղ չեք գտնի:

Ցնցված Վիլսկին լռում էր:

— Համաձայն եք, համաձայն, խոսել այլևս պետք չէ,— շարունակում էր բանկիրը:— Նստեցեք իմ կառքը: Ձեր արտաքինին անհրաժեշտ է վայելուչ տեսք տալ: Այժմ ես ձեզ որոշ քանակությամբ փող կտամ, իսկ հետագայում կխոսենք շինարարական ընկերություն հիմնելու ձեր նախագծի մասին: Ես այդ նախաձեռնությունը հոյակապ եմ համարում: Կառապան, ե՛տ դարձիր: Ես ուղիղ ձեզ մոտ էի գալիս: Պան Վիլսկի, անպայման պետք է ուժերը ներածին չափ ծառայել հասարակությանը: Անձամբ ես այդպես եմ վարվում: Իսկ շինարարական ընկերությունը մեզ համար պարզապես անհրաժեշտություն է:

Երբ ձիերը կանգ առան, բանկիրն ասաց.

— Հիմա ես կհրամայեմ երաշխիքային պարտավորություն կազմեն, իսկ դուք, խնդրում եմ, առայժմ գնացեք իմ Ամելիայի մոտ:

Վիլսկին մեքենայաբար բարձրացավ աստիճաններով և մի վայրկյան անց արդեն հյուրասենյակում էր:

Անցավ մեկ րոպե... երկու... երրորդին դռների մեջ երևաց բանկիրի կինը:

Նա շատ գունատ էր: Ձեռքը մեկնելով Վիլսկուն, նա փոխված ձայնով ասաց.

— Վաղուց է, ինչ չենք տեսնվել...

Մի ակնթարթ նրա դեմքը կարմրեց:

Կարճ լռություն տիրեց, որը կրկին ընդհատվեց տիկին Վելտի կողմից:

— Ես այսօր իմացա ձեր... չգիտեմ, թե ինչպես անվանեմ: Մարդիկ դա երջանկություն են անվանում... Եվ եթե դա իսկապես երջանկություն է, ապա ես անկեղծորեն... ամբողջ սրտով շնորհավորում եմ ձեզ:

Վիլսկին համբուրեց նրա ձեռքը: Այն կրակի պես տաք էր, բայց անշարժ:

Հետո սկսեցին խոսել տարբեր թեմաների շուրջ՝ սկզբում մի փոքր քաշվելով, իսկ այնուհետև ավելի ու ավելի ազատ: Հանկարծ աստիճանների վրա լսվեց Վելտի ձայնը:

Պանի Ամելիան խոսքը կտրեց և արագ հարցրեց.

— Ասում են դուք պատրաստվում եք Կրակով մեկնել, այո՞:

— Ստիպված եմ:

— Ե՞րբ:

— Ճիշտն ասած դեռ չգիտեմ:

— Ես էլ եմ պատրաստվում մեկնելու:

— Ե՞րբ,— զգալով, թե ինչպես է կանգ առնում սիրտը, հարցրեց Վիլսկին:

Պանի Ամելիան տատանվեց.

— Դա դեռ վերջնականապես վճռված չէ,— ասաց նա:

Բանկիրը բարձրանում էր աստիճաններով:

— Ուրբաթ երեկոյան,— ցածր ձայնով արագորեն ասաց կինը:

Վելտը մտավ հյուրասենյակ, մեկ րոպե խոսեցին երեքով, այնուհետև բանկիրը Վիլսկուն հրավիրեց իր աշխատասենյակը: Նրանք այնտեղ մոտ մեկ ժամի չափ փողերն էին հաշվում: Այնուհետև բաժանվեցին ինչպես բարեկամներ:

— Խնդրում եմ նկատի ունենաք,— հրաժեշտ տալով ասաց բանկիրը,— որ ես շուտ համոզվող մարդ եմ, որ կողմը շրջես, այն կողմն էլ կշրջվեմ: Ես ձեր նախագծերի նկատմամբ միշտ էլ հարգանք եմ տածել՝ և եթե չլիներ... Ի՞նչ ասեմ... Դուք հո լավ գիտեք, թե ինչ է նշանակում կնոջ զգուշությունը: Ես հույս ունեմ, որ դուք չեք բարկանա իմ Ամելիայի վրա, եթե ասեմ, որ այդ նա էր խանգարում մեր փոխըմբռնմանը, բայց երեկ ես նրան վերջապես զինաթափեցի: Դուք հաջողակ մարդ եք, ձեր բախտը բերում է, իսկ գործարար հարաբերությունների մեջ դա շատ մեծ նշանակություն ունի:

Վլադիսլավն արդեն դուրս էր գալիս, երբ Վելտը ձայնեց:

— Մի րոպե: Գիտե՞ք ինչ... եկեք իրար հետ «դու»-ով խոսենք: Բարեկամների և գործընկերների միջև ոչ մի ձևականություն չպետք է լինի: Այդպիսին է իմ սկզբունքը:

Տանը Վլադիսլավը մի քանի այցետոմսեր տեսավ, որոնք ստացված էին այն բարեկամներից, որոնք դեռ երեկ նրան չէին ցանկանում ճանաչել ու մի քանի խնդրագրեր՝ աղքատներին օգնություն ցույց տալու համար: Երևում էր, որ վերջիններս հրաշքով էին իմացել իր հարստության մասին:

— Ահա թե ինչպիսին է մարդկային հոգեբանությունը,— ծաղրանքով ասաց նա:

— Բայց դու բոլոր դեպքերում օգնիր այդ աղքատներին: Ո՞վ գիտե, Վլադիկ, գուցե նրանք էլ վաղուց ծախսել են իրենց վերջին ռուբլին,— պատասխանեց Էլենկան:

Վլադիսլավը խոստացավ օգնել նրանց, հետո ծիծաղելով պատմեց Վելտի հետ սրտալից հանդիպման մասին, ցույց տվեց փողերը, այնուհետև հայտնեց, որ ուրբաթ օրը մեկնում է Կրակով:

— Այսինքն վաղը չէ մյուս օրը՞,— շշնջաց Էլենկան գունատվելով,— ես այնքան տխուր կլինեմ:

Նա գրկեց կնոջը, և դրանից հետո մեկնելու մասին այլևս ոչ մի խոսք չեղավ:

Հաջորդ օրը նա ասաց, որ նոր բնակարան է վարձել:

— Կրակովյան փողոցի վրա, հինգ սենյակ է, միջանցքով խոհանոցով: Եվ այդ ամենը յոթ հարյուր ռուբլով:

— Մենք այստեղ մեզ այնքա՜ն լավ էինք զգում,— պատասխանեց Էլենկան:— Այ, կտեսնես, այդ նոր բնակարանում մենք երջանկություն չենք ունենա:

— Դրանից բացի,— շարունակեց ամուսինը,— մենք հիանալի կահույք ձեռք կբերենք, սպասավորներ, աղախին ու խոհարար:

— Իսկ ի՞նչ կլինի Մաթեուշովայի հետ:

— Ախ, իսկապես... Լավ, մենք դեռ կմտածենք նրա մասին:

Եկավ մեկնելու օրը: Եղանակը շատ վատ էր՝ քամոտ, ամպոտ ու խոնավ: Վիլսկին մտահոգ էր: Էլենկան շարունակ հոգոց էր հանում: Երկուսն էլ ճաշին ձեռք չտվեցին և անհանգիստ երեկոյին էին սպասում:

Ժամը ութին մոտ Էլենկան ասաց.

— Ես քեզ մինչև գնացք կճանապարհեմ, լա՞վ:

— Ինչի՞ համար, հրեշտակս, կմրսես:

Ժամը իններին մոտ տանը մի կառք մոտեցավ:

Վլադիսլավը դանդաղ հագավ վերարկուն, վերցրեց պայուսակը: Սենյակում մեռյալ լռություն էր տիրում:

— Մի երկու շաբաթից ես կվերադառնամ,— խուլ ձայնով ասաց Վիլսկին:

— Կվերադառնա՞ս,— շշնջաց Էլենկան՝ գլուխը նրա կրծքին դնելով: Հանկարծ ինչ-որ փշփշոտ բան կպավ Վիլսկու ձեռքին: Ծեր Մաթեուշովան էր համբուրում նրան:

Վիլսկին շտապ դուրս եկավ, բայց մի քանի աստիճան դեռ չիջած, կանգ առավ: Նրան թվաց, ինչ-որ բան կաշկանդեց նրա ոտքերը: Մի քիչ դանդաղեց, հետո սաստիկ հուզված ետ դարձավ: Դեռևս միջանցքում կանգնած Էլենկան ընկավ նրա գիրկը:

— Օ՜, չմոռանաս ինձ,— արտասվելով, հազիվ կարողացավ արտասանել նա:

Վիլսկին կրկին դուրս եկավ, այս անգամ էլ Էլենկան վազեց նրա ետևից:

— Կվերադառնա՞ս: Չե՞ս մոռանա:

Արդեն կառքի մեջ նստած, նա մեկ անգամ էլ նայեց վերև և երկրորդ հարկի պատուհանում տեսավ ետ քաշված վարագույրը և ինչ-որ ստվեր՝ նրա մոտ կանգնած:

— Օ՜, չմոռանաս ինձ...

Փողոցները մառախուղով էին լցվել, լապտերները կարմիր լույս էին արձակում: Չորս կողմից քայլերի ձայն էր լսվում և անիվների դղրդոց:

«Կվերադառնա՞ս.... Չե՞ս մոռանա...» — շշնջում էր արձագանքը:

Վիլսկին կայարան հասավ հուզված ու նյարդայնացած: Ուղեբեռը բեռնակրին տալով, նա առանց ետ նայելու գնաց ուղիղ դեպի առաջին կարգի սրահը:

Այնտեղ ընդամենը մի քանի մարդ կար, բոլորն էլ անծանոթ: Դա նրան հանգստացրեց: Շունչը ետ բերեց, կարծես շատ մեծ վտանգից էր ազատվել, ու մտովի նորից հրաժեշտ տվեց Էլենկային:

Այդ պահին լսվեց Վելտի ձայնը:

— Հրաշալի է: Նշանակում է դու էլ ե՞ս այստեղ:

— Ինչպես տեսնում ես:

— Պատկերացրու, որ իմ Ամելիան էլ է մեկնում: Ես նրան մի գործով Կրակով եմ ուղարկում, որտեղ պետք է... դե ինքդ գիտես թե ինչ... մի բան, որ միայն նա կարող է գլուխ բերել:

Տիկին Վելտն անտրամադիր էր և շարունակ լռում էր:

Վիլսկին գնաց տոմս վերցնելու և երբ վերադարձավ, բանկիրը ծիծաղելով ասաց նրան:

— Ինչ ուզում ես ասա, կինն ուրիշ բան է: Երեք օր առաջ հայտարարեց, որ կգնա, իսկ այսօր ամբողջ օրը քմահաճություն էր անում, իսկ հիմա էլ հայտնում է, թե վախենում է մրսի ու գերադասում է վաղը մեկնել:

— Դե ինչ, գուցե և արժե,— սառը պատասխանեց Վիլսկին:— Ցավում եմ, որ դու ինձ չծանոթացրեցիր քո գործի հետ, այլապես ես կաշխատեի գլուխ բերել այն:

— Ի՞նչ ես ասում: Քո գլուխը հիմա քո միլիոններով է լցված, իսկ իմ գործը սառնասրտություն և ուշադրություն է պահանջում: Ոչ, միայն նա կարող է գլուխ բերել:

Զանգը տվեցին: Ուղևորները սկսեցին զբաղեցնել իրենց տեղերը: Հանկարծ արյան տաք շիթը հարվածեց Վիլսկու քունքին. մինչև գետինը հասնող երկար շրջազգեստի տակից նա նկատեց տիկին Վելտի գեղեցիկ, փոքրիկ ոտքի ուրվագիծը:

Այդ ոտքի տեսքից նա մոռացավ և կնոջը, և հուզմունքը, և քիչ առաջվա զգացած տհաճ ապրումները:

— Դե նստիր, Վլադիսլավ,— գոռաց բանկիրը:

Չորս կողմը ճանապարհորդների ձայներն էին լսվում: Գնացքը շարժվեց, բայց Վլադիսլավը ոչինչ չէր նկատում: Նա դժվարությամբ կարգավորեց շնչառությունը:

— Յուրօրինակ դրություն է,— հանկարծ ձայնեց տիկին Վելտը,— քիչ առաջ ես տեսա Սվեգոտնիցկուն և գրեթե համոզված եմ, որ վաղն ամբողջ Վարշավան կսկսի բամբասել, թե ես իմ ամուսնու համաձայնությամբ ու ներկայությամբ փախել եմ ձեզ հետ:

— Իսկ մեզ ի՞նչ,— իր վառվող հայացքով այրելով նրան ասաց Վիլսկին:

— Ձեզ համար ոչինչ, ինձ համար ոչ մի բան,— բազմանշանակ պատասխանեց նա:

— Ինչ էլ որ լինի, փաստը մնում է փաստ և եթե դա այդպես է…

Ամելիայի հայացքը նրան ստիպեց լռել: Եվ միայն այժմ Վիլսկին նկատեց, որ կուպեում իրենք երկուսով են:

Երկար լռություն տիրեց: Այդ ընթացքում տիկին Ամելիան անտարբեր հայացքով պատուհանից դուրս էր նայում, իսկ Վիլսկին... կորցրեց ինքնատիրապետման վերջին մնացորդը:

Անզգուշորեն նա վայր գցեց ձեռնոցը, որն ընկավ տիկին Վելտի ոտքի մոտ: Երբ կռացավ այն վերցնելու, Վիլսկին թեքով զգուշությամբ կպավ նրա կոշիկին: Հանկարծ նա զգաց, որ իր մարմնի մկանները դարձան երկաթյա շիկացած զսպանակներ, որ կուրծքը ուր որ է կպայթի, որ սեփական շնչառությունն այրում է իրեն: Նա հայացքը բարձրացրեց Ամելիայի վրա և մտածեց, որ եթե այժմ երկուսին սվիններով մի անտառ բաժաներ, նա մի խուրձ ճիպոտների նման կցրեր բոլորը:

— Հուսով եմ, դուք ինձ կծանոթացնեք ձեր տիկնոջ հետ,— մի ձայնով, որն ասես սուր դանակի պես կտրեց նրա սիրտը, ասաց բանկիրի կինը:

Լուռ, ջղաձիգ անհամբերությամբ Վիլսկին սպասում էր լույսը բացվելուն: Երբ գնացքը հասավ սահմանին, նա կնոջը հեռագիր ուղարկեց:

VI

ԴԺՈԽՔ ՏԱՆՈՂ ՍԱՆԴՈՒՂՔԸ

Կրակովում Վլադիսլավը տիկին Վելտից համարյա սառնորեն բաժանվեց, այնուհետև մի քանի օր անընդհատ զբաղված լինելով գործերով, նրան համարյա չէր տեսնում: Այդ ընթացքում նա հասցրել էր մոտիկից ծանոթանալ իր ժառանգությանը, կարոտով լի ու շուտ վերադառնալու խնդրանքով տոգորված երկու նամակ ստանալ Էլենկայից, որոնց մեջ հիշեցնում էր մի քանի հին ծանոթների մասին, որ աղքատ էին և որ ինքը խոստացել էր օգնել:

Առաջին շաբաթվա վերջում նա նամակ ստացավ Վարշավայից և մի երկտող՝ Կրակովից: Երկու ձեռագրերն էլ նրան ծանոթ էին, սակայն նա սկզբում առաջին նամակը կարդաց:

Վարշավայից նրան աղքատ ուսանողն էր գրում, որը սովորաբար չորեքշաբթի օրերին ճաշում էր Վիլսկիների մոտ: Հասարակ, բայց սրտալի արտահայտություններով երիտասարդը Վիլսկուն շնորհավորում էր ժառանգության առթիվ և ցավում այն բանի համար, որ նրա մեկնելուց առաջ անձամբ չի կարողացել հանդիպել:

— Խեղճ տղա,— ասաց Վիլսկին:— Կփորձեմ փող ուղարկել նրան: Կխոսեմ ընկերական անկեղծությամբ, թեկուզ և նամակի միջոցով և, կարծում եմ, չի նեղանա:

Այնուհետև նա բացեց երկրորդը, որի մեջ հետևյալն էր գրված

«Երբեք չէի կարծում, որ դուք կարող եք ձեր հայրենակցուհուն ձանձրույթից ու մենակությունից մահվան դատապարտել: Այսօր սպասում եմ թեյի:

Ա. Վելտ»:

Վելտը թոթվեց ուսերը և քանի որ դեռ շատ ժամանակ կար, գնաց քաղաքում զբոսնելու:

Փողոցներով աննպատակ քայլելով, նա մեկում կոշիկի ցուցափեղկ նկատեց, ուր ամենատարբեր ձևի ու գույնի կոշիկների հավաքածուի մեջ փոքրիկ սև գույնի հունգարական կիսակոշիկներ տեսավ: Մի քիչ այդտեղ կանգնելուց հետո կրկին սկսեց քայլել հենց այնպես, աննպատակ, ուր ոտքերն էին տանում: Այտերի վրա մուգ կարմիր երևաց, երևակայությունը տենդորեն գործում էր:

Եվ նա ինքն իրեն Վարշավայում տեսավ, տանիքի տակի փոքրիկ սենյակում: Այնտեղ ցուրտ է, սովն ու հուսահատությունը տանջում են իրեն:

Հանկարծ բացվեց դուռը՝ դռների մեջ երևաց փոքրահասակ, մեծ փորով, ժպիտը դեմքին ու գլխարկը ձեռքին պահած մի մարդ: Դա ձեղնահարկի հարևանն էր՝ աղքատ ձեռնոց կարողը:

— Ի՞նչ կհրամայեք,— հարցրեց նրան Վիլսկին:

— Ես չեմ հրամայում, այլ եկել եմ ձեզ խնդրելու,— պատասխանեց հյուրը։— Աստված իմ,— շարունակեց նա,— ի՞նչ կարիք կա պահմտոցի խաղալու։ Խնդրում եմ ինձ մի ծառայություն մատուցեք։

— Իսկ ինչպիսի՞։

— Թույլ տվեք վառել ձեր վառարանը և տաք ճաշով կերակրել ձեզ։

— Սակայն...

— Ես նախապես գիտեմ, թե ինչ պիտի ասեք,— նրա խոսքը կտրեց ձեռնոց կարողը։— Բայց դա պետք չէ։ Դուք երիտասարդ եք, ուսումնական և, կարծում եմ, անպայման մեծ դիրքի կհասնեք։ Եվ եթե ոչ ինձ, ապա գոնե իմ երեխաներին կվերադարձնեք այդ ճաշերը, նույնիսկ տոկոսներով... Դե, խնդրում եմ ձեզ, այլապես այստեղից չեմ հեռանա։

Այս ասելով, այդ բարի մարդը ձեռքը մեկնեց Վիլսկուն։ Երկու աղքատներն ամուր սեղմեցին միմյանց ձեռքը, և խաղաղություն հաստատվեց։

Հանկարծ հեռու անցյալի տեսիլքի և այսօրվա հարուստի միջև կանգնեց հունգարական կոշիկի տեսիլքը։ Վիլսկին սթափվեց և գնաց բանկիրի կնոջ մոտ։

Նա տիկին Վելտին գտավ հյուրասենյակում։ Նրա կողքին մի փունջ վարդ էր դրված։ Տիկինը ժպտաց և, ձեռքը մեկնելով Վիլսկուն, փափուկ հանդիմանանքով ասաց։

— Ես ձեզ նույնիսկ չպետք է բարևեի։

— Ինձ արդարացնում է իմ զբաղվածությունը,— պատասխանեց շփոթված Վիլսկին։

— Սակայն վերջնականորեն դուք կարդարացվեք այն դեպքում միայն, եթե այսօրվա երեկոն նվիրեք ինձ։

Վիլսկին քնքշանքով ու լռությամբ լսում էր նրան։

Ողջ երեկոյի ընթացքում նրանք խոսեցին գարնան, ծաղիկների, լեռնային տեսարանների մասին։ Խոսում էին կիսաձայն, ինչպես ուսանողն ու ինստիտուտկան[1] հիվանդի մահճի մոտ։

Ժամը տասնմեկին մոտ Վիլսկին պատրաստվելով հեռանալու, ասաց.

— Այս ծաղիկներից մեկն ինձ չե՞ք տա։

— Ինչո՞ւ։

— Որպես հիշատակ այսօրվա երեկոյի։

— Այո,— ասաց նա,— կյանքում այդպիսի օրեր շատ քիչ են լինում,— և, վարդը հանելով փնջից, ասաց,— վերցրեք, ի նշան մեր բարեկամության։

Նրա աչքերը խոնավ էին։

---

[1] Ինստիտուտկա — միամիտ, հափշտակվող աղջիկ։

Վլադիսլավը տուն վերադառնալիս ասես մոլուցքի մեջ լիներ, չիմանալով ինչ մտածեր և ինչին հավատար: Տենդորեն դողալով, նա անկողին մտավ և ջերմ ունեցողի պես քնեց, սեղմված ատամների արանքից շշնջալով:

— Ինչ էլ որ լինի,— նա ինձ սիրում է...և ես անուղղելի անասուն կլինեմ, եթե ետ վանեմ այդ երջանկությունը կամ էլ անհամբերությամբ գործը փչացնեմ....

Հաջորդ օրը տիկին Վելտը նրան ճաշի հրավիրեց: Պատրաստվելով գնալ նրա մոտ, Վիլսկին հիշեց աղքատ ուսանողի մասին և իր կարծիքով շատ ընկերական մի նամակի հետ նրան փող ուղարկեց: Իրականում այդ նամակը շատ անտարբեր ու անուշադիր էր գրված:

Այդ օրվանից նրա ճակատագիրը որոշված էր: Կնոջը նա սկսեց ավելի հազվադեպ գրել, պատճառաբանելով իր զբաղվածությունն ու դժվարությունները, բայց դրա փոխարեն սկսեց ավելի ու ավելի հաճախ լինել և ավելի երկար նստել բանկիրի կնոջ մոտ: Հավատարիմ մնալով իր խոստմանը՝ լինել համբերատար, նա բավարարվում էր միայն խոսակցություններով, ձեռքսեղմումներով, հայացքներով, որոնք գնալով ավելի ջերմ ու կրքոտ էին դառնում:

Ժամանակ առ ժամանակ նրան թվում էր, թե հնազանդության փորձությունը շատ է ձգձգվում: Այդպիսի պահերին նա ավելի խիզախ էր դառնում, սակայն տիկին Վելտը սառնորեն ետ էր մղում նրան, և Վլադիսլավը կորցնում էր գլուխը: Երբեմն նա որոշում էր վերադառնալ Վարշավա, բայց նրա հաստատակամությունը շուտով թուլանում էր և ինքն իրեն ասում էր.

— Մի օր էլ… վերջինը:

Արդեն մայիսի կեսերն էր: Բանկիրը կնոջը շտապեցնում էր տուն դառնալ, և պանի Ամելիան ավելի հաճախ էր խոսում վերադարձի մասին:

— Մի օր էլ... թախանձում էր Վիլսկին:

— Լավ,— լինում էր պատասխանը, և նրանք մնում էին:

Բոլոր տեսակի գործերը մոտենում էին ավարտին: Հանգուցյալի տունն ու ապրանքները վաճառված էին, և փողը Վլադիսլավի գրպանում էր: Սակայն այդ մասին նա քիչ էր մտածում: Նրա համար ողջ աշխարհը խտացել էր պանի Ամելիայի առանձնասենյակում, ողջ կյանքը՝ մի մտքի մեջ միայն. «մի օր էլ.»

Հարուստ ժառանգությունը ոսկյա թել հանդիսացավ, որի վրայով նրա հոգում տեղավորվեց ահավոր մի հիվանդություն: Նա գիտեր այդ մասին, հասկանում էր, որ հարկավոր է բուժվել, նույնիսկ նախազգում էր, որ կբուժվի բայց ե՞րբ...

Անիծվա՛ծ երջանկություն:

Մի գեղեցիկ օր նա Վարշավայից երկու նամակ ստացավ:

Նրանցից մեկը ուսանողից էր, որը ետ էր ուղարկել իր փողերը: Երիտասարդն այն ուղեկցել էր հարգանքի խոսքերով, բայց դրա հետ միաժամանակ խոր վիրավորանքով հասկացնել էր տվել, որ ողորմություն չէր խնդրել: Ուստի ընդունել այդ փողերը չի կարող:

— Զզվելի է,— շշնջաց վշտացած Վլադիսլավը:— Հարկավոր է ինչ-որ կերպ ուղղել սխալը:

Անիծվա՛ծ երջանկություն...

Երկրորդ նամակը կնոջից էր:

Էլենկան հայտնում էր, որ իրեն այցելել են հարուստ ազգականները, որոնց նա փոքր ժամանակ է տեսել: Ազգականները ոչ մի պատճառաբանություն չլսելով, նրան գյուղ են հրավիրել, բացատրելով, որ իրենք արտասահման են մեկնում և ողջ տունն իր տրամադրության տակ կլինի: Եվ որ նրանք համոզված են եղել, որ իրենց հրավերը չի մերժվի, Վարշավայում են թողել իրենց ծառային ու կառքը:

Ետգրության մեջ Էլենկան զգուշորեն ակնարկել էր, որ բժիշկներն էլ են խորհուրդ տալիս մեկնել:

Այն մասին, որպեսզի Վլադիսլավը վերադառնա, նա չէր էլ հիշել:

Սակայն Վիլսկին այդ բանը չնկատեց և զարմանալի էլ չէր: Չէ՞ որ նա ամենագետ իմաստուն ոգի չէր, որ իմանար, թե Վարշավայում իր ու բանկիրի կնոջ մասին ինչեր են խոսում:

Բոլոր դեպքերում Էլենկայի նամակը զարմացրեց նրան:

«Հավանաբար նա հիվանդ է,— մտածեց նա:— Գուցե և վտանգավոր... հարկավոր է վերադառնալ»:

Երեկոյան, ինչպես միշտ, նա գնաց տիկին Վելտի մոտ և, վերադառնալով, նստեց կնոջը նամակ գրելու: Նա խնդրեց կնոջը անպայման գյուղ գնալ, ավելացնելով, որ շուտով ինքն էլ կգա:

Նամակը գրելիս նա իր առջև տեսավ գունատ ու տխուր կնոջը: Հեռու հեռվից նա ձեռքերը մեկնել էր դեպի ամուսինը, որոնք նիհար և անարյուն էին, գաջի գույնի:

«Դու կվերադառնա՞ս....» ասում էր արձագանքը:

— Եթե ես տեսնեմ Էլենկային, Ամելիայից կհրաժարվեմ,— շշնջաց նա, սակայն անմիջապես էլ ավելացրեց,— և մեծ հիմարություն կանեմ:

Արթնանալով, նա ուղարկեց նամակը, իսկ երկու օր անց հեռագիր ստացավ, որ Էլենկան գյուղ է մեկնել:

Նա անհապաղ գնաց տիկին Վելտի մոտ և, շտապ ներս մտնելով, ուրախ բացականչեց:

— Ժամանակն է վերադառնալ:

— Վաղուց ժամանակն է,— պատասխանեց կինը:

Եվ նրանք վերադարձան դարձյալ միասին, և կրկին Վիլսկին ոչ մի քայլ առաջ չգնաց:

«Մի օր էլ...»— մտածում էր նա:

Անիծվա՛ծ երջանկություն...

VII

ՎԵՐՋԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հունիսի վերջին Վելտը, հարստությունը թողնելով կնոջ հսկողության տակ, իսկ կնոջը՝ ընկերոջ, մեկնեց արտասահման: Վարշավան բամբասանքից տրաքվում էր, որի մասին շահագրգռված մարդիկ ավելի քիչ բան գիտեին, քան ուրիշները:

Էլենկան ամուսնուն հազվադեպ ու քիչ էր գրում: Եթե նա կնոջ նամակներն ավելի ուշադիր կարդար, գուցե ավելի շուտ բուժվեր: Դժբախտաբար այդ բանի համար նա ժամանակ չուներ: Ամիսներն անցնում էին անօգուտ և կրքից տառապելով, նա նիհարել էր, գունատվել ու մոռացել բոլորին և ամեն ինչ:

Տիկին Վելտը այդ հանգամանքի վրա ուշադրություն չդարձնել չէր կարող: Եվ մի անգամ, երբ նրանք մենակ էին, նկատեց.

— Դուք այսօր շատ տարօրինակ տեսք ունեք:

— Եվ դուք չե՞ք ենթադրում թե ինչու,— կիսաձայն հարցրեց նա:

— Օ՜, աստված իմ, ես, ճիշտ է, շատ լավ հասկանում եմ ֆինանսներից, սակայն բժշկությունից գաղափար անգամ չունեմ,— ուշադիր նայելով ձեռքի մատանու ադամանդին, պատասխանեց նա:

— Այդ դեպքում բավական է ծանոթ լինել մարդու սովորական զգացմունքներին,— նրան ավելի մոտ նստելով, ասաց Վիլսկին:

— Մարդկային սովորական զգացմունքներն ուշադրության արժանի չեն,— վերամբարձ ոճով արտաբերեց նա:

Վիլսկին խիստ բորբոքված վեր թռավ աթոռից:

— Ես զգում եմ, որ պետք է փախչեմ ձեզանից:

— Իսկ ես զգում եմ, որ պետք է մնաք,— չարաճճիորեն նայելով նրա աչքերին, շշնջաց Ամելիան:

Վլադիսլավը կրկին նստեց ու բռնեց նրա ձեռքերը:

Այդ ժամանակ տվեցին հյուրասենյակի զանգը, և ինչ-որ մեկը եկավ:

Օգոստոսի վերջին, երբ Վլադիսլավի սիրային անհաջողությունը հասել էր իր գագաթնակետին, նա Լոնդոնում գտնվող Գրոդսկուց հետևյալ բովանդակությամբ հեռագիր ստացավ:

«Մոդելների հարցում դու ինձ ծանր կացության մեջ ես դրել: Ուղարկիր գոնե իմ հրահանգները»:

Այդ հեռագիրը կատաղեցրեց Վիլսկուն, և նա առանց մտածելու պատասխանեց:

«Հրահանգները կորել են: Վերադարձնում եմ փողերը»: Երկրորդ հեռագիրը նա չստացավ:

Օրվա մեծ մասը նա անց էր կացնում բանկիրի կնոջ մոտ:

Երբ Ամելիան մենակ էր լինում, Վիլսկին նրան հայացքով խժռում էր, երբ տանտիրուհին հեռանում էր, նա երազում էր նրա մասին, անհանգստությամբ ու հաճույքով լսում նրա զգեստի շրշյունը:

Մի անգամ, երբ Ամելիան սենյակում չէր, նա ծնկի իջավ համբուրեց այն տեղը, որտեղ Վելտի կինն ավելի հաճախ էր դնում իր փոքրիկ ոտքը:

Նրան ավելի ու ավելի հաճախ էին տանջում հալյուցինացիաները, երբեմն՝ լի սիմվոլիկ իմաստով: Մի անգամ նա երազում տեսավ, իբր ինքը մուրհակների ու անդորրագրերի թևերով թռչում է մինչև մեծ ժայռի գագաթն ու նույն վայրկյանին ընկնում անդունդը:

Մի անգամ, դա արդեն սեպտեմբերին էր, տուն վերադառնալով, նա աստիճանների վրա հանդիպեց հին ծանոթին: Դա նրա ձեղնահարկի առաջվա հարևանն էր՝ բարի ձեռնոց կարողը, խիստ նիհարած և շատ աղքատ հագնված:

— Ախ, այդ դո՞ւք եք...— դուռը հրելով, ասաց Վլադիսլավը:

— Ըհը, ես եմ: Ահա եկել եմ... եկա իմանալու ձերդ պայծառափայլության առողջության մասին,— գլխարկը հանելով, շշնջաց խեղճը:

— Շնորհակալ եմ, վատ չէ,— պատասխանեց Վիլսկին և իր ետևից փակեց դուռը:

Միայն մի քանի ժամ անց նա հասկացավ, որ իր նախկին բարի կերակրողը հավանաբար շատ վատ է ապրում: Նա ցանկացավ իմանալ նրա հասցեն և ուզեց զանգահարել ծառային, անգամ ձգվեց դեպի զանգը, բայց զանգը սեղանի մյուս ծայրին էր, և Վիլսկին թափ տվեց ձեռքը:

Այն, ինչ նա զգում էր, ոչ թե մարմնային տանջանք էր, այլ ավելի շուտ հոգեկան անտարբերություն: Կայծակի հարվածը անկասկած կսթափեցներ նրան:

Երբեմն նրա միտքը պայծառանում էր: Այդպիսի մի պահի նա ինքն իրեն ասաց:

— Հարկավոր է միանգամից վերջ տալ այս բանին:

Որոշումը հավանաբար լուրջ էր, քանի որ դեմքի յուրաքանչյուր ծալքով վճռականություն էր արտահայտում:

Վիլսկին գնաց բանկիրի կնոջ մոտ:

Ամելիային գտավ կառքի մեջ, երբ նա պատրաստվում էր մեկնել բուսաբանական այգի: Թույտվություն խնդրելով, Վլադիսլավը տեղ գրավեց նրա կողքին և մեկնեցին միասին:

Այգում Ամելիան ասաց:

— Նայեցեք, տերևներն արդեն թառամում են:

— Թառամում են տերևները... թառամում են սրտերը... միայն թե մեկի համար գարունն ամեն տարի է կրկնվում, իսկ մյուսի համար մի անգամ գարուն է, մի անգամ աշուն:

Այդ բառերը մարգարեական էին, սակայն նա ինքն իրեն հաշիվ չէր տալիս, թե ում մասին է խոսում:

Նրանք նստեցին բլուրի վրայի նստարանին, որտեղից դեպի շրջապատը հիանալի տեսարան էր բացվում:

— Այստեղ,— ասաց Ամելիան,— մայիսին սոխակների երամը բույն է հյուսում: Ես հաճախ եմ նստել այստեղ, լսել նրանց երգը: Բայց նրանք հիմա չվել են տաք երկրներ...

Վիլսկին արմունկները ծնկներին հենել, գլուխն ափերի մեջ առած լուռ գետնին էր նայում:

— Ձեզ ի՞նչ է պատահել: Դուք ձեզ նման չեք:

— Դուք միանգամայն իրավացի եք,— գլուխը բարձրացնելով, պատասխանեց նա:— Ես իսկապես ինձ նման չեմ, բայց...

— Բա՞յց...

— Բայց... քոնն եմ:

Նա բռնեց կնոջ ձեռքերը: Վերջինս չընդդիմացավ ու պատասխանեց թեթև սեղմումով, խոնարհ հայացքով նայելով նրա աչքերի մեջ:

Վիլսկին զգաց, թե ինչպես կատաղորեն սկսեց աշխատել սիրտը, ականջները խշշացին և... նրան մոտ քաշեց: Կինը չհակառակվեց:

Այդ ժամանակ Վիլսկին գրկեց նրան և իր այրվող դեմքը մոտեցրեց նրա դեմքին:

— Վերջապե՛ս,— շշնջաց նա:

— Աստծո սիրուն,— բացականչեց Ամելիան,— աղաչում եմ ձեզ, գնանք այստեղից...

Վիլսկին ոտքի կանգնեց արդեն որպես բոլորովին ուրիշ մարդ: Ուժի և ինքնավստահության զգացումը, որի մասին նա վաղուց մոռացել էր, հիշեցրեցին իրենց գոյության մասին: Նա ձեռքը մեկնեց Ամելիային վերջինս ընդունեց այն և հարբածի նման քայլեց Վիլսկու կողքով:

Կառքի մեջ նա քաշվեց մի անկյուն և փակեց աչքերը:

Ձիերը սլանում էին քամուց էլ արագ՝ և մի քանի րոպե անց նրանք արդեն տանն էին:

Ամելիան արագ ներս վազեց և վերև բարձրանալով, մտավ իր զարդասենյակը: Վիլսկին նրանից ոչ մի քայլ ետ չէր մնում: Երբ կինն ընկավ բազկաթոռին, Վիլսկին ծնկի իջավ նրա առաջ և շուրթերով հպվեց նրա ձեռքերին:

— Դու ինձ սիրո՞ւմ ես,— ասում էր նա,— ասա, որ սիրում ես: Թող գոնե մի անգամ ճշմարտությունն իմանամ:

Սենյակներում խավարն էր տիրում:

. . . . . .

Տուն վերադառնալով, նա մեռածի պես քնեց և երազները նրան մի քանի ամսով ետ տարան: Երազում նա տեսավ, թե իբր Էլենկային հրաժեշտ է տալիս:

Կինը տարօրինակ գունատ էր: Նրա երբեմնի փայլող կապույտ (իսկ այժմ գունաթափված) աչքերից արցունքներ էին գլորվում: Կինը գրկեց նրա պարանոցը, թեթև ու անէական, ինչպես մառախուղը և անլսելի ձայնով շշնջաց:

— Դու կվերադառնա՞ս... կվերադառնա՞ս...

Վիլսկին ոտքի թռավ: Տաք արցունքների երկու շիթ հոսեցին նրա այտերի վրայով: Ոտքից գլուխ նա պատվեց սառը քրտինքով, ձեռքերը դողում էին:

Առավոտյան ժամը չորսն էր:

Նա այլևս չպառկեց և նույնիսկ բուխարին այս անգամ ինքը վառեց:

Կրակի մոտ նստած նայում էր ծխացող փայտերին ու մտածում: Ինչի՞ մասին էր մտածում: Միայն աստծուն է հայտնի մարդկային հոգու տանջանքները, երբ խղճի խայթը պատառոտում է սիրտդ:

Ժամը յոթին նա ինքն իրեն ասաց:

— Ես ուրիշ եմ դարձել:

Անկասկած նա այդ պահին իր ողջ հարստությունը կփոխեր աղքատի ցնցոտիների հետ, միայն թե իմանար, որ այդ ցնցոտիների մեջ հոգին հանգիստ կլինի:

Անիծվա՛ծ երջանկություն:

VIII

LE PROFUNDIS[2]

— Ես ուրիշ եմ դարձել,— ասում էր Վլադիսլավը:— Երբ ճակատագիրն ինձ ազատեց կարիքի ճանկերից, իմ գլուխը մի փոքր աղմկեց, բայց այժմ ես սթափվեցի և այդպես լավ է: Ես փորձ ձեռք բերեցի և թեկուզ շատ ժամանակ կորցրեցի, սակայն դրա փոխարեն հարստությունս անձեռնմխելի է մնացել:

Հանկարծ հիշեց կնոջը: Դարակից հանեց լուսանկարը և քնքշանքով նայեց երկար:

— Արդյոք կներե՞ս ինձ:

Էլենկայի ժպտացող շուրթերը անսահման պատրաստակամությամբ ներում էին շշնջում, բայց ավաղ, այդ ժպիտն ուրիշ ժամանակ էր ծնված:

Վիլսկին երեխայի պես ուրախ էր: Պատուհանները բացելով, նա մեծ հաճույքով ներշնչեց առավոտյան սառն օդը և հիացավ ոսկյա ամպերով, որոնք աստված գիտե, թե որտեղից էին լողում: Գուցե այնտեղից, որտեղ այժմ Էլենկան էր ապրում:

— Օ՜, եթե այժմ ես կարողանայի ընկնել քո ոտքերը, իմ մաքուր հոգի, իմ հրեշտակ,— շշնջաց նա:

Զանգահարեց: Ներս մտավ ծառան:

— Այսօր երեկոյան ինձի համար շտապ կերպով փոստային կառք պատվիրիր,— կարգադրեց Վիլսկին:

— Պարզ է...

— Սպասի՛ր: Ասա ինձ, որտե՞ղ է մեր դեղձանիկը:

— Սատկեց, ձերդ ողորմածություն:

— Այդ դեպքում անմիջապես գնիր երկու հատ՝ էգ և արու, և անպայման վանդակի մեջ, որ բույն ունենան:

Ծառան գնաց:

— Եժի՛,— կրկին գոռաց Վիլսկին: Իսկ երբ ծառան վերադարձավ, հարցրեց.— Պատահմամբ չգիտե՞ս, թե այժմ որտեղ է Մաթեուշովան, որն առաջ մեր տանն էր ծառայում:

— Հիմա Գարեջրային փողոցում է ծառայում: Մի երկու անգամ եկել է այստեղ:

---

[2] Le profundis — ի խորոց սրտի-ապաշխարության աղոթքի առաջին բառերը (լատ.):

— Դու նրան մեր տուն կբերես և կասես, որ թողնի այդ աշխատանքը, քանի որ այստեղ պետք է ծառայի:

Մի վայրկյան անց նա նոր հարց տվեց:

— Որտե՞ղ են իմ հաստոցն ու գործիքները:

— Ձեղնահարկում, ձերդ ողորմածություն:

— Հարկավոր է դրանք մաքրել և դնել իմ սենյակում:

Ծառան գլուխը բռնած դուրս գնաց:

— Քրիստոս, խղճա մեզ: Այդ ի՞նչ է պատահել նրան,— փնթփնթաց միամիտ գյուղացին,— մեկ էլ տեսար բոլորիս վռնդեց...

Նա առանց երկար մտածելու այդ նորությունների մասին հայտնեց խոհարարուհուն և սպասուհուն:

Իսկ այդ պահին Վիլսկին հագնվում էր՝ ինքն իրեն կրկնելով.

— Երբ ամեն ինչ պատմեմ, նա գոհ կլինի: Օ՜, Էլունյա, օ՜, օրհնված փողեր...

Վիլսկին ինչ-որ ուրախ բան սուլեց, ճիշտ է, ոչ այնքան ուրախությունից, որքան այն բանի համար, որպեսզի խլացնի հոգում բույն դրած անհանգստության զգացումը:

Քաղաքում նա առաջին հերթին մտավ հեռագրատուն և հեռագիր ուղարկեց Գրոդսկուն:

«Ամբողջ սրտով ներողություն եմ խնդրում ակամա խաբեության համար: Հիվանդ էի: Որքան կարող ես շուտ արի: Ցանկալի է, որ արդեն թոշակի անցած լինես:»

Հեռագիրն ուղարկեց միաժամանակ Լոնդոն և Պետերբուրգ:

Այ, ճիշտ միտք է,— ասում էր Վլադիսլավը:— Նրա օգնությամբ ես կյանքի կկոչեմ իմ նախագծերից ամենագործնականն ու կսկսեմ ապրել... քեզ համար, Էլունյա, և քո շնորհիվ՝ ուրիշների համար ևս....

Այնուհետև նա գնաց համալսարան, որպեսզի լուր ստանա աղքատ ուսանողի մասին: Երկար փնտրելուց հետո նա գտավ վերջինիս համակուրսեցուն:

— Ի՞նչ նորություն կա Վ-ից, հարցրեց նա:

— Ստույգ ասել չեմ կարող,— պատասխանեց ուսանողը,— բայց այնքանը գիտեմ, որ նա թողեց համալսարանը և մեկնեց Պոդոլշչինայի կողմերը, դաստիարակի պաշտոն ստանալու հույսով:

— Իսկ ինչո՞ւ թողեց համալսարանը,— զարմացած բացականչեց Վիլսկին:

— Ի՞նչ եք ուզում: Դժվար է սովորել, երբ փողի փոխարեն ունեցածդ ընդամենը տասը մատ է միայն:

— Առաջինը,— փնթփնթաց Վիլսկին և գնաց հասցեների բյուրո՝ ձեռնոց կարողի մասին որևէ բան իմանալու հույսով:

Նրան երեք հասցե տվեցին:

Հասցեներից մեկը նրան տարավ Օգորոդնայա փողոցը, որտեղ նրան մի անծանոթ մարդ հանդիպեց:

— Ես դեռ երկու հասցե ունեմ:

Նա փակեց աչքերը և հանեց պատահած հասցեն: Այս անգամ գնաց Պրագա և պարզեց, որ տանտերը որմնադիր է:

Երրորդ հասցեով նա ընկավ ուղիղ Վոլսկու ուղեկալը: Մտավ միհարկանի փայտյա տունը և գտավ փոքրիկ, խոնավ, մութ և բոլորովին դատարկ մի սենյակ:

— Որտե՞ղ է ձեռնոց կարողը, որ այստեղ էր ապրում,— հարցրեց Վիլսկին ծառային, նրա ձեռքը մի ռուբլի դնելով:

— Ո՞վ գիտե, ձերդ ողորմածություն: Մի շաբաթ առաջ տան եղած-չեղածը վաճառեց ու տղայի հետ մեկնեց:

— Բայց նա կին ուներ և երեք երեխա:

— Կի՞ն: Նա այստեղ էր ապրում շատ վաղուց, սուրբ Յանի օրերից, բայց կնոջն ինչ-որ չեմ տեսել: Իսկ նրա երկու մեծ երեխաները դեռ օգոստոսին մահացան:

— Ահա և երկրորդը... և երրորդը և չորրորդը,— շշնջաց Վիլսկին։— Ես ուզում էի Էլենկայի մոտ մեկնել ապացույցները ձեռքիս, բայց, ինչպես երևում է, ես դրանք չեմ ստանա: Ախ, աստված:

Երեկոյան նա ստացավ իր հեռագրի պատասխանները: Պետերբուրգից հայտնում էին:

«Գրոդսկին դեռ չի վերադարձել»:

Իսկ Լոնդոնից՝

«Գրոդսկին մեկնել է»:

«Հավանաբար նա ծովով է վերադառնում»,— մտածեց Վիլսկին և երկրորդ հեռագիրը ուղարկեց Պետերբուրգ, որով խնդրում էր ընկերոջը՝ շուտ գալ:

Բայց Գրոդսկին ցամաքով էր վերադառնում և արդեն անցել էր Բեռլինը: Հեռագիրը նա չէր ստացել:

Առավոտից Վիլսկին տանը չէր եղել, ոչինչ չէր կերել, անհանգստության թույնը նրա համար փոխարինել էր ամենաընտիր կերակուրներին: Նա տուն վերադառնալ չէր ուզում, դրա համար էլ մտավ Սաքսոնական այգին, նստեց նստարանին և ընկավ ծանր մտքերի մեջ:

— Չորս զոհեր,— կրկնում էր նա։— Ես եմ մեղավոր, դա ճիշտ է... սակայն նրանք ինչի՞ համար տանջվեցին և ինչի՞ համար են շարունակում տանջվել:

Նա մոռանում էր, որ մարդիկ ենթարկվում են ոչ միայն բարոյական, այլև ֆիզիկական կանոններին: Նա մոռանում էր, որ հասարակությունը միասնական է, և եթե նրա մի մասն իր պարտականությունները չի կատարում, ապա դրա փոխարեն վճարում են մյուսները:

Երբ տուն վերադարձավ, դուռը բացող ծառան զարմացած նրան նայեց:

— Ոչ ոք չի եկե՞լ,— հարցրեց Վիլսկին:

Նամակ էր եկել:

Փորձելով վառել մոմը, Վլադիսլավը թափրտեց լուցկիները: Մատներն ասես փայտացել էին, և ծառան ստիպված եղավ օգնել նրան:

Անծանոթ ձեռքով գրված նամակը հետևյալ բովանդակությունն ուներ:

«Ողորմած Տեր և Բարերա՛ր: Չնայած այն բանին, որ մենք անծանոթ ենք, ձեր հարգարժան ու առաքինի կնոջ օգտի համար

ես համարձակվում եմ ձեռքս վերցնել գրիչն ու գրել այս տողերը: Մինչև այժմ մի անգամ չէ, որ փորձել եմ գրել ձեզ, բայց Ձեր բարեհոգի տիկինը թույլ չի տվել: Շատ չխորանալով, քանզի այդպիսի դեպքերում դա ամենավատ բանն է և երբեմն ստիպված ես ասելու այն, ինչ չես ցանկանում արտահայտել, իմ Տեր ու Բարերար, ամենայն զգուշությամբ ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն բանի վրա, որ վերը նշված ձեր տիկինն իրեն այնքան էլ լավ չի զգում: Ավելի ճիշտը կլիներ ասել, որ շատ ու շատ վատ է, բայց չեմ ցանկանում ավելորդ մանրամասնություններով վշտացնել ձերդ ողորմածությանը, որոնց լուրը, ցավոք, չեն ուշացնի հասցնել...»

Վիլսկին շարունակությունն այլևս չկարդաց: Գրոտված թղթի հակառակ երեսին նայելով հասկացավ, որ նամակը գրված է տեղի քահանայի կողմից:

Տենդագին արագությամբ հագավ մորթե վերարկուն, վերցրեց փողերն ու գնաց փոստային կայարան, որտեղ պահանջեց չորս ձիանոց մի կառք: Մեկ ժամ անց նա քաղաքից շատ հեռու էր:

.....

Հաջորդ օրը երեկոյան հինգին մոտ Վլադիսլավին տանող փոստային կառապանը, որը վերջին կայարանից էր, թեքվելով դեպի ուղևորը, ձեռքում բռնած մտրակի կոթով ցույց տվեց արդեն դեղնող ծառերով պատած բարձունքն ու ասաց.

— Ահա, ձերդ պայծառափայլություն, «Աստծո կամք» դաստակերտը:

— Աստծո կա՞մք,— կրկնեց Վիլսկին:

— Հիանալի դաստակերտ է, ձերդ պայծառափայլություն: Հողը բերրի է, մարգագետնում ջրաղաց կա... Ամեն ինչ տեղը տեղին է, ինչպես ընդունված է բարի շլյախտիչների մոտ:

— Աստծո կամք,— շշնջաց Վլադիսլավը:

Նրանք անցան այգու կողքով: Անշարժ ծառերի արանքից երևում էին սպիտակ պատերը: Վիլսկին մի հինգանոց տվեց կառապանին և, ցած թռչելով կառքից, ցատկեց անցավ ցանկապատի վրայով:

— Օ՜, երևում է շատ է շտապում,— գլխարկը ձեռքին պահած մտածեց զարմացած կառապանը:

Ոչինչ չտեսնելով, իրեն կորցրած Վլադիսլավը վազքով կտրեց-անցավ այգին և, կանգնելով բլրակի գագաթին, խաղողի որթերով ծածկված նախագավթի ապակեպատ դռների արանքից տեսավ մի քանի մեծ, կողք-կողքի շարված մոմեր:

Նրա ձեռքերի ուժի տակ բանալիով փակված դռներն աղմուկով բացվեցին:

Գորգով ծածկված ցածր թախտի վրա, սև, գործած զգեստը հագին (որը լավ հիշում էր իրենց աղքատության օրերից), խաչը գլխավերևում և սրբապատկերը ձեռքին, այրվող մոմերով շրջապատված, պառկած էր մեռած Էլունյայի մարմինը:

Վիլսկին նստեց բազկաթոռին, փայտացած մատները հենեց ծնկներին և անզգայացած հայացքով նայեց մոմերից մեկին, որի վրայով խոշոր կաթիլներով հոսում էր հալված մեղրամոմը:

Դռան արանքից երևում էին հետաքրքրասեր ծառաների գլուխները, որոնք փսփսում էին.

— Դա երևի ամուսինն է, հա՞... իհարկե ամուսինը կլինի, բա ո՞նց...

Մի քանի րոպե անց սենյակ մտավ մի մեծահասակ կին, որը հավանաբար տնտեսուհին էր: Մի երկու անգամ երեսին խաչ հանելով, կանգնեց Վլադիսլավի մոտ և սկսեց արտասվել:

— Ա՜խ, խեղճ աղջիկ: Ինչքան երիտասարդ էր ու լավիկը: Ավելի լավ կլիներ, որ բարի աստվածն ինձ՝ պառավիս տաներ նրա փոխարեն... Ձերդ ողորմածություն, ես ամեն ինչ արեցի նրա համար, ինչ կարող էի: Ամեն օր թարմ կաթ ու աղբյուրի սառը ջուր էի տալիս, թթու վարունգի ջուր էի խմացնում, ծխահարում ու հմայում էի, բայց այդ ամենը զուր էր: Խեղճը դեռ այն ժամանակ էր հիվանդ, երբ Վարշավայից այստեղ եկավ... Քանի անգամ ես նրան ասացի, որ ձերդ ողորմածությանը հարկավոր է կանչել, իսկ նա՝ չէ ու չէ՜... Իսկ վերջին շաբաթ օրն ինձ ասաց. «Իմ Բորկոսյա՜: Տարեք ինձ բլրակի վրա, այնտեղից ավելի լավ է երևում»: Եվ ասում եմ ձերդ բարեձնությանը, ամբողջ օրերով ձայն չէր հանում, միայն շարունակ ականջ էր դնում, թե որևէ կառք չի՞ գալիս, ոչ ոք ներս չի՞ մտնում և երբեմն շատ ցածր ձայնով ասում էր.

«Ա՜խ, ես երևի նրան այլևս չեմ տեսնի... երբեք...» Վերջին օրը թուղթ ու մատիտ պահանջեց: Մտածեցի, թե նամակ կգրի իմ աղավնյակը: Բայց ոչ, մի բան գրեց. «Վլադիկը, Վլադիկը... իմ Վլադիկը... երբեք չի վերադառնա...» Բայց ի՞նչ եմ խոսում, ձերդ ողորմածությունը ճանապարհից հոգնել է... գուցե ձվածեղ անեմ, հը՞: Մսեղենից պատրաստի ոչինչ չկա:

Պառավը սենյակից դուրս եկավ, արդեն դռների մեջ քրթմնջալով.

— Ողորմի իրեն, հավերժ հանգիստ հոգուն...

Վլադիսլավը աթոռից վեր կացավ, նայեց մեռածի՝ մոմի պես դեղին դեմքին, կավի պես մուգ կոպերին, բռնելով նրա սառը, փայտացած ձեռքերը, շշնջաց.

— Էլո՛ւնյա, այդ ես եմ:

Նրա հայացքի առջև վերակենդանացավ կնոջ դեմքը, ինչպես այն ժամանակ՝ երկրորդ հարկի պատուհանի մոտ, կառքի անիվների աղմուկին ականջ դնելիս:

— Էլունյա՜, այդ ես եմ...,— կրկնեց նա,— ես այստեղ եմ... Նայիր ինձ:

«Ա՜խ, ես երբեք արդեն չեմ տեսնի նրան... երբեք...»— պատասխանեց տեսիլքը:

— Ախր ես այստեղ եմ, նայիր ինձ, Էլունյա…— տնքաց Վիլսկին:

«Այդքան երկար սպասել ու չտեսնել...»— մառախուղի մեջ ցրվելով, արտասվում էր տեսիլքը:

. . . . . .

Հաջորդ օրը քահանայի և ծխականների մի փոքր խմբի ուղեկցությամբ սև դագաղը տարան դեպի գյուղական գերեզմանատուն: Թաղման թափորի ճանապարհին նրանց մոտ կանգ առավ մի կառք: Նրա միջից դուրս թռավ Գրոդսկին միացավ դագաղի ետևից քայլող Վլադիսլավին:

Ամբողջ ճանապարհին Վիլսկին ասես փայտացած լիներ: Ոչ մեկին չէր նայում և լռում էր:

Երբ գերեզմանատուն մտան, լսվեց ինչ-որ մեկի ձայնը:

— Դագաղի կափարիչը բացեք: Գուցե նա մի անգա՞մ էլ է ցանկանում տեսնել իր կնոջը:

Վլադիսլավը ասես չէր լսում այդ խոսքերը: Չլսեց նաև դագաղի վրա լցվող ծանր հողակտորների աղմուկը, ոչ էլ հիմնի սրտաճմլիկ երաժշտությունը:

«Ողջույն, երկնքի թագուհի, գթառատ մայր Աստվածածին…»

Երբ թաղման բոլոր մասնակիցները հեռացան, Գրոդսկին ցնցեց Վլադիսլավի ուսն ու ասաց.

— Գնանք ինձ հետ:

— Ես անիծված եմ,— պատասխանեց Վիլսկին:

— Դու միայն հի՛վանդ ես և ուրիշ ոչինչ: Գնանք ինձ հետ:

— Նա սպասել է ինձ, լսո՞ւմ ես... Սպասել է և կսպասի այդ սարսափելի սև դագաղի մեջ, բայց այլևս ինձ երբեք չի տեսնի… Երբե՛ք:

Նա տնքոցով ընկավ հողի վրա, թևերը տարածեց և ջղաձիգ շարժումներով գրկեց թարմ գերեզմանաթումբը:

1876